Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 16 (516) հոկտեմբեր 1-17, 2022թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը

Վճռականօրէն դատապարտում ենք վերջին օրերին ՀՀ վարչապետի հրապարակային ելոյթներում տեղ գտած խիստ վտանգաւոր եւ հակազգային դիրքորոշումներն ու մօտեցումները, եւ այդ հիմքով Պրահայում Եւրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակներում տեղի ունեցած բանակցութիւնների ընթացքում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները:

Յայտարարում ենք.

- ՀՀ վարչապետը եւ իշխող վարչախումբը չեն սպասարկում հայկական շահերը եւ չունեն լեգիտիմ մանդատ Հայաստանի ու հայութեան անունից ստորագրելու որեւէ փաստաթուղթ, որը հարցականի տակ է դնում Հայաստանի եւ Արցախի ինքնիշխանութիւնն ու հայ ժողովրդի շահերը:

- Միջազգային իրաւունքի սկզբունքների եւ նորմերի կոպիտ ոտնահարմամբ, մասնաւորապէս ուժի կիրառման եւ ուժի սպառնալիքի կիրառման, ինչպէս նաեւ Ադրբեջանի կողմից բացայայտ ագրեսիայի եւ Հայաստանի ինքնիշխան տարածքների բռնագրաւման պայմաններում՝ սահմանազատման եւ սահմանագծման ուղղութեամբ ցանկացած գործընթացի նախաձեռնում եւ իրականացում անընդունելի է:

- Արցախն իր ինքնիշխանութիւնը հռչակել է միջազգային եւ ներպետական իրաւական կառուցակարգերին համապատասխան եւ այն սակարկման ենթակայ չէ:

- Հայաստանի Հանրապետութիւնը որեւէ պարագայում չի կարող հրաժարուել Արցախի ժողովրդի անվտանգութեան եւ ինքնորոշման իրաւունքի երաշխաւորի կարգավիճակից: Նման քայլը անխուսափելիօրէն կը յանգեցնի Արցախի հայաթափմանն ու արցախահայութեան հայրենազրկմանը:

Ակնկալում ենք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները հաւատարիմ կը մնան իրենց ստանձնած մանդատին ու պարտաւորութիւններին եւ հետեւողական կը լինեն հռչակուած սկզբունքների հիման վրայ Արցախի հիմնախնդրի կարգաւորման հարցում:

Կո՛չ ենք ուղղում հայ ժողովրդին չտրուել իշխանութեան կողմից սերմանուող պարտուողական տրամադրութիւններին, չյուսահատուել, համախմբուել ազգային ուժերի շուրջ եւ բեկում մտցնել իրավիճակի մէջ: Դա ենթադրում է արմատական փոփոխութիւններ երեք հիմնական ուղղութիւններով.

ա) Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան վերականգնումով համահայկական զօրաշարժի իրականացում,

բ) պաշտպանութեան եւ անվտանգութեան հրատապ խնդիրների լուծում,

գ) կենսական զիջումները բացառելուն ուղղուած արտաքին զօրակցութեան ապահովում:

Այս առաջնահերթ խնդիրների լուծումը հնարաւոր է միայն ժողովրդի վստահութիւնը վայելող ազգային համաձայնութեան նոր կառավարութեան ձեւաւորման դէպքում:

Մենք վճռական ենք, յստակ պատկերացնում ենք մեր անելիքները եւ կոչ ենք անում միասնական պայքարի:

Հ.Յ.Դ. Բիւրո
8 Հոկտեմբեր, 2022 թ.

Արցախի պատվիրակության հանդիպումները Երեւանում

Հոկտեմբերի 9-ին հայտնի էր դարձել, որ Արցախի նախագահի գլխավորած պատվիրակությունը ժամանել է Երեւան՝ ՀՀ իշխանությունների հետ քննարկելու Արցախի եւ Հայաստանի շուրջ ստեղծված իրավիճակը:

Պատվիրակության կազմում էին ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը, արտգործնախարար Դավիթ Բաբայանը, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Վահրամ Բալայանը, ԱՀ նախագահի հատուկ հանձնարարությունների դեսպան Մասիս Մայիլյանը:

Մի քանի օր հետո՝ հոկտեմբերի 12-ին, տեղի է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Արայիկ Հարությունյանի հանդիպումը: Հոկտեմբերի 13-ին ԱՀ պատվիրակությունը ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանի առաջնորդությամբ հանդիպում է ունեցել ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ: Արցախի պատվիրակությունը ՀՀ ԱԽ քարտուղարին է ներկայացրել պաշտոնական Ստեփանակերտի դիրքորոշումը:

ԱՀ պատվիրակությունն ընդգծել է, որ Արցախի համար «կարմիր գիծ» է ցանկացած փորձ, որը կդիտարկի Արցախի ապագան Ադրբեջանի կազմում՝ շեշտելով, որ Արցախը հավատարիմ է մնում ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափով բանակցային գործընթացի վերսկսմանը՝ պաշտոնական Ստեփանակերտի մասնակցությամբ:

Հոկտեմբերի 14-ին պատվիրակությանն ընդունել է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը: Ըստ տարածված հաղորդագրության՝ հանդիպմանը քննարկվել են արցախահայությանը, ՀՀ քաղաքական օրակարգին վերաբերող հարցեր: Ալեն Սիմոնյանը ներկայացրել է վերջին շրջանում միջազգային գործընկերների հետ հանդիպումների, ինչպես նաեւ օրեր առաջ ՌԴ կատարած այցի մանրամասները:

ՀՀ ԱԺ-ից վստահեցնում են, որ երկու ժամ տեւած հանդիպմանը սպառիչ պատասխաններ են տրվել արցախցի գործընկերների հարցերին:

Հայաստանի իշխանությունը որեւէ որոշում գաղտնի չի պահի Արցախից: Այս հայտարարությունն արել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հետ հանդիպման ժամանակ:

«Մի փաստ պետք է արձանագրել, որ Հայաստանի իշխանության բոլոր ներկայացուցիչները որեւէ որոշում չեն կարող կայացնել ձեր ետեւում կամ ձեզանից գաղտնի պահել: Ցանկացած քննարկման մասին ես տեղյակ եմ, եթե նույնիսկ ներկա չեմ՝ ծանոթանում եմ բոլոր փաստաթղթերին:

Արցախի հարցը միշտ բարձրացվում է եւ օրակարգում կա, մեր օրակարգում այդ խնդիրը չի կարող չլինել: Մենք ուղղակի պետք է լուծման տարբերակը միասին քննարկենք եւ մեր քաղաքացիներին հասանելի դարձնենք, թե մենք ինչպես ենք պատկերացնում ապագան»,- ասել է ՀՀ նախագահը:

Հոկտեմբերի 15-ին ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանն է հանդիպել պատվիրակության հետ: Միրզոյանը ներկայացրել է Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման շուրջ ընթացող քննարկումների զարգացումները եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հեռանկարները:

Հոկտեմբերի 16-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է հյուրընկալել Արցախի պատվիրակությանը: Տարածված հաղորդագրության մեջ նշվում է, որ անդրադարձ է կատարվել Ադրբեջանի հետ տարվող քննարկումների ընթացքին:

Վարչապետը նշել է, որ ինչպես մինչ այժմ, այնպես էլ հետագայում Արցախի գործընկերներին տրամադրվելու է քննարկումների մասին ամբողջ տեղեկատվությունը:

Փաշինյանը պետք է հեռանա, որպեսզի կարողանանք փրկել Արցախն ու Հայաստանը

Նիկոլ Փաշինյանի, Իլհամ Ալիեւի, Էմանուել Մակրոնի եւ Շառլ Միշելի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած հանդիպման արդյունքով ընդունվել է հայտարարություն, ըստ որի՝ Հայաստանն ու Ադրբեջանը հաստատել են իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը:

Այս առնչությամբ Yerkir.am-ը մեկնաբանություն է խնդրել Արցախի «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խըմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանից. «Սա նշանակում է, որ Փաշինյանը ձեռքերը լվացել է Արցախից, ինչպես միշտ ասել էինք»:

Հարցին՝ արդյոք այս հայտարարությամբ Արցախը ճանաչում են որպես Ադրբեջանի մաս, խմբակցության ղեկավարն ասաց. «Փաշինյանն ո՞վ է, որ Արցախը ճանաչի Ադրբեջանի մաս, ինքնորոշման իրավունքը դեռ ոչ մեկը չի քընարկել: Արցախը 1991 թվականին ինքնորոշվել է եւ հռչակվել որպես անկախ պետություն»,- նշեց պատգամավորը:

Հանդիպումից հետո Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ Բաքվի առաջարկած 5 սկզբունքների հետ կապված հարցեր չեն եղել ո՛չ հայկական կողմի, ո՛չ Եվրամիության մոտ:

Թեմայի առնչությամբ Մոսիյանը նշեց, որ սա նշանակում է այն, ինչի համար Փաշինյանը 2018 թվականին եկել է իշխանության: Սա դավադիր ծրագրի իրականացման ընթացքն է: Սա շատ վատ հետեւանքներ կարող է ունենալ: Փաստորեն, ինքն ու Ալիեւը միաբերան նույն բանն են ասում, մեկն՝ ավելի ցինիկ ձեւով, մյուսը՝ քողարկված: Խաղաղության պայմանագրի անվան տակ ստորագրվում է նոր կապիտուլյացիոն պայմանագիր: Փաշինյանը չի բանակցում, նրան պարտադրում են կնքել իրենց պայմաններով պայմանագիր»,- նշեց պատգամավորը:

Նա կարծում է, թե այս ամենը կանխելու համար պետք է համազգային համախմբում լինի. թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի կործանումը փրկելու համար պետք է համախմբվել: Միանշանակ պետք է Փաշինյանը հեռանա, որպեսզի կարողանանք փրկել Արցախն ու Հայաստանը»:

Այցը հաջողված էր եւ ծառայել է իր նպատակին

Սեպտեմբերի 15-30-ը Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը եւ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը գտնըվում էին ԱՄՆ-ում: Արցախի պաշտոնյաները բավականին հագեցած այց են ունեցել, որի մանրամասնեռի մասին զրուցել ենք Լեռնիկ Հովհաննիսյանի հետ.

- Պարո՛ն Հովհաննիսյան, լրատվությունից տեղյակ ենք, որ հանդիպումներ եք ունեցել ԱՄՆ հայկական, քաղաքական, հասարակական եւ այլ շրջանակների հետ: Այդ հանդիպումներից որո՞նք կառանձնացնեիք, ի՞նչ տպավորություններով եք վերադարձել:

- ԱՄՆ ենք այցելել ՀՅԴ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի հրավերով: Վաշինգտոնում մեզ միացել է նաեւ ԱՄՆ-ում եւ Կանադայում Արցախի մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը: Հանդիպումների մասին ամենօրյա լրատվություն էր տրվում, բավականին հագեցած էին հանդիպումները, խիտ գրաֆիկով ենք աշխատել: Հետաքրքիր շատ հանդիպումներ են եղել, այդ թվում՝ Հայ դատի կողմից կազմակերպված «Կրթել, աշխուժացնել, մոտիվացնել» խորագրով խորհրդաժողովը, որը բաղկացած էր երկու փուլից՝ վաշինգտոնյան եւ լոս-անջելեսյան: Հիմնական բանախոսը ԱՀ ԱԳ նախարարն էր: Ես նույնպես ելույթ եմ ունեցել՝ խոսելով ԱՀ օկուպացված տարածքների մշակութային ժառանգության պահպանության, մարտահրավերների եւ մշակութային ցեղասպանության մասին, որն այսօր կատարվում է մեր պատմամշակութային ժառանգության նկատմամբ: Բավականին ներկայացուցչական կազմ է եղել: Վաշինգտոնում մասնակցել է նաեւ փաստաբան Սիրանուշ Սահակյանը, ով զբաղվում է ռազմագերիների խնդրով, իսկ ԱՄՆ Արեւմտյան ափին շարունակված խորհրդաժողովին մասնակցում էին նաեւ ԱՀ Մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանը, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը:

Հանդիպումները բավականին բարձր մակարդակով էին կազմակերպվել, որի համար ուզում եմ շնորհակալություն հայտնել ՀՅԴ Հայ դատի մարմիններին: Մեր պատվիրակությունը պատշաճ ընդունելության է արժանացել ոչ միայն հայկական շրջանակներում, այլ նաեւ ԱՄՆ Կոնգրեսում ու Սենատում:

- Ինչո՞վ եք կարեւորում այցը:

- Այցը կարեւորվում է նրանով, որ ներկայացրել ենք Արցախյան հակամարտության հետ կապված ԱՀ դիրքորոշումը: Վերջին ժամանակներս այդ հարցի հետ կապված որոշակի խնդիրներ կային, եւ հենց առաջին ձեռքից թե՛ մեր սփյուռքահայ հայրենակիցներին, թե՛ ամերիկյան քաղաքական շրջանակներին ներկայացվեցին Արցախի այսօրվա իրավիճակը, հակամարտությունը, հետագա լուծման ուղիները: Հընչած լուսաբանական հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

- Կարո՞ղ ենք համարել, որ այցը հաջողված էր եւ արդյունավետ:

- Այո՛: Հիմա պետք է ականատես լինենք, թե ինչպիսի արձագանքներ կան, ու ձեռք բերված պայմանավորվածությունները, որոշ խոստումներ պետք է դրվեն գործնական հողի վրա: Այս առումով՝ այցը հաջողված էր եւ ծառայել է իր նպատակին:

- Ձեր պատասխանատվության ոլորտների առումով ի՞նչ է հաջողվել իրականացնել:

- Խորհրդաժողովների ժամանակ մշակութային քաղաքականության եւ մշակութային ժառանգության հետ կապված հարցեր են հնչեցվել թե՛ մեր հայրենակիցների, թե՛ այլ շրջանակների կողմից: Մենք այնտեղ բաժանել ենք նախարարության օժանդակությամբ եւ Համլետ Պետրոսյանի ու Հայկուհի Մուրադյանի կողմից հրատարակված «Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում» գրքույկը: «Թեքեյան» մշակութային միությունում քննարկել ենք մշակութային ծրագրերի օժանդակության հարցը: Շատ կարեւորում եմ Համազգային հայ մշակութային եւ կրթական միության Կենտրոնական վարչության արեւմտյան շրջանի ներկայացուցիչ Տիգրան Պապիկյանի հետ քննարկումները:

ԱՄՆ-ն՝ որպես պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության պահպանության առաջին օրենսդրական հիմքը ստեղծող երկիր, դեռեւս 1863թ. ապրիլին Աբրահամ Լինքոլնի կողմից ստորագրել է Ֆրենսիս Լիբերի օրենքը, որը հստակ սահմանում է, որ պատերազմական գոտիներում մշակութային արժեքները պետք է պահպանվեն եւ հարձակումների թիրախում չհայտնվեն: Կարեւոր է, որ այս մասին հիշեցվի, եւ ԱՄՆ-ն իր ակտիվությունը ցուցաբերի տվյալ հարցում, կանխվի մեր օկուպացված տարածքներում տեղի ունեցող մշակութային էթնոցիդը:

- Հայ համայնքի հետ հանդիպումների ընթացքում Արցախի հետ կապված ի՞նչ տրամադրություններ զգացիք:

- Արցախի նկատմամբ միշտ դրական վերաբերմունք կա, որը չի փոխվել: Մեր համայնքը բավականին անհանգստացած է, եւ հավաստիացրին, որ իրենց հնարավորության սահմաններում ամեն ինչ անելու են՝ սատար կանգնելու, օգնելու Արցախին: Այդ հավաստիացումները ստացել ենք բոլոր հայկական կազմակերպությունների հետ հանդիպման ժամանակ: Կարող եմ առանձնացնել թուրքագետ Վարուժան Գեղամյանի հետ Բուրբանքի «Բեշիր Մարտիրոսյան» երիտասարդական կենտրոնում տեղի ունեցած հանրային քննարկումը, որը կազմակերպվել էր ՀՅԴ ԱՄՆ Արեւմտյան շրջանի ԿԿ-ի կողմից: Քննարկումը մարդաշատ էր. հնչել են տարբեր մտահոգություններ, եւ ամեն ինչով Արցախին սատարելու պատրաստակամություն են հայտնել:

Հարցազրույցը՝ Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ

Մի՞թե մեր զավակների արյամբ սրբացած հողը ինչ-որ ապրանք է, որ կարող ենք վաճառքի հանել. Արցախի թեմի առաջնորդ

Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը ներկա կացության առիթով հանդես է եկել կոչով.

«Սիրո՛վ ծառայեցեք միմյանց»:
(Գաղ 5:13)

«Սիրելի՛ Հայրենակիցներ,

Աշխարհաքաղաքական հարափոփոխ այս օրերին բոլորիս մտածումները եւ անհանգստությունները բնականորեն կենտրոնացած են աշխարհի ալեկոծ ծովում նավարկող մի փոքր նավի եւ նրա մակույկի վրա: Հայաստան եւ Արցախ՝ ահա այդ նավը եւ նրա փրկության մակույկը:

Ինչ անել եւ ինչպե՞ս անել, որ մենք կուլ չգնանք անընդհատ մեզ խորտակել փորձող ալիքներին: Ժամանակին մեր Նավը հզոր էր եւ մեծ, որովհետեւ ուներ հզոր նավապետներ եւ միակամ ուղեւորներ, բայց դարերի ընթացքում սկսեցին հայտնվել բազում նավապետներ, ովքեր, առանձին նավակներ կառուցելով, մասերի բաժանեցին նավի ուղեւորներին, եւ քանի որ առանձին էին ու փոքր, սկսեցին վաղ թե ուշ խորտակվել: Այն ուղեւորները, ովքեր կենդանի էին մնացել տարբեր նավակների կործանումից հետո, հիշեցին իրենց երբեմնի մեծ նավակի հզորությունը եւ Աստծո օգնությամբ կառուցեցին մի նոր նավ՝ Հայաստանի Հանրապետությունը՝ իր փրկության մակույկ Արցախով: Բայց միեւնույն է՝ ծովը եւ ալեկոծությունները միշտ էլ կան ու կլինեն:

Ուստի մեր գլխավոր մտածումը մեկն է. Ինչ պետք է անենք, որ չկրկնենք մեր պատմական սխալները եւ մասերի չբաժանենք առանց այն էլ փոքրացած հայոց նավը: Այսօր թշնամին փորձում է վերջնական կերպով խլել մեր փրկության մակույկը ՝ Արցախը եւ հետո մասնատել բուն նավը:

Ի՞նչ անենք, երբ այնտեղից, որտեղից սպասում էինք գըտնել պաշտպանություն, օգնություն եւ հոգատարություն, գտնում եք կսկիծ եւ փորձություններ:

Իրականում այս ամենը լինում է, որպեսզի որեւէ մեկը երբեք չապավինի մարդկանց եւ միշտ հիշի Սուրբ Գրքի խոսքը. «Հույս մի՛ դրեք իշխանների՝ մարդկանց որդիների վրա, որովհետեւ նրանցից փրկություն չկա (Սաղ. 145:3)

Սիրելինե՛ր, այսօր մեր ազգը կանգնած է այնպիսի դժվարին փորձության առաջ, երբ դըրված է մեր լինել-չլինելու, մեր ազգային արժանապատվության կորստի հարցը: Մեր մեջ այնքան խորն է արմատակալել անտարբերության կործանարար մեղքը, որ մեր երկրի մասնատումը ցավ է պատճառում միայն այդ մասի բնակիչներին եւ մի խումբ հայրենասեր ու գիտակից մարդկանց:

Մեծ հաշվով այնքան ենք բթացել, որ պատրաստ ենք նույնիսկ այնքան թանկ գնով ազատագրված Արցախը սկուտեղի վրա մատուցել թշնամուն՝ ի գին մեր «խաղաղ եւ ապահով» կյանքի:

Մի՞թե սա է հայը, մի՞թե վերջնականապես կորցրել ենք մեր արժանապատվությունը, մի՞թե մեր զավակների արյամբ սրբացած հողը ինչ-որ ապրանք է, որ կարող ենք վաճառքի հանել...

Սիրելի՛ Հայրենակիցներ, մենք պետք է սթափվենք՝ ամենաբարձր պաշտոնյայից մինչեւ ռամիկ շինական եւ տեր կանգնենք մեր երկրին: Հավատացե՛ք, ինչպիսի փորձություններ էլ լինեն, դրանք անզոր են մեզ կործանելու, եթե մենք Աստծո խոսքի համաձայն սիրով ծառայենք միմյանց (հմմ: Գաղ. 5:13), այդ ժամանակ Աստված կլինի մեր բարի Նավապետը, իսկ եթե Աստված մեզ հետ է, ո՞վ կարող է լինել մեզ հակառակ (հմմ: Հռոմ. 8:31)»:

Խորհրդարանի ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչների հանդիպումը ԱրՊՀ-ում

Արցախի պետական համալսարանում մեկնարկած «Արցախ. նոր մարտահրավերներ եւ հաղթահարման ուղիներ» խորագրով ԱՀ եւ ՀՀ պետական, քաղաքական գործիչների հետ հանդիպումների շրջանակում հոկտեմբերի 13-ին ԱրՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել հանդիպում-քննարկում Արցախի Հանրապետության «Արցախի ժողովրդավարական», «Հայ Յեղափոխական Դաշնակցություն», «Արդարություն» կուսակցությունների ներկայացուցիչներ Աշոտ Ղուլյանի, Արթուր Մոսիյանի եւ Դավիթ Գալստյանի հետ:

Նախքան հանդիպման մեկնարկը ներկաները ծաղիկներ են խոնարհել Արցախյան պատերազմներում անմահացած ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով հյուրերին, նշել է, որ հասարակության շրջանում բազում հարցեր են կուտակվել, անորոշություն է տիրում, եւ Արցախի ապագայի, հետագա անելիքների հարցը հուզում է նաեւ շարժման ակունքներում գտնվող Արցախի մայր բուհի համալսարանականներին:

Հանդիպումը ծավալվել է հարցուպատասխանի ձեվաչափով: «Արցախի Ժողովրդավարական» կուսակցության ղեկավար Աշոտ Ղուլյանի խոսքով՝ իրավիճակն այսօր այնպիսին է, որ ամեն օր օրակարգ է փոխվում, մեր շուրջը լուրջ փոփոխություններ են տեղի ունենում: «Նույնիսկ եթե մեկ ամիս առաջ էլ հանդիպած լինեինք, միեւնույն է, նախորդ հանդիպումից հետո որոշակի զարգացումներ, նոր իրադարձություններ էին տեղի ունենալու»,- նշել է Աշոտ Ղուլյանը՝ ավելացնելով, որ հանդիպմանը ներկա երեք քաղաքական ուժերն ԱՀ խորհրդարանում միասին ընդդիմության դիրքերից են հանդես գալիս: Իսկ նման հանդիպումները հանրային տրամադրությունների ուսումնասիրման լրացուցիչ հնարավորություն են:

ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԱՀ ԱԺ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը, ողջունելով նախաձեռնությունը, առաջարկել է իրադարձությունների արագորեն զարգացման ֆոնին նման հանդիպումները պարբերական դարձնել:

Անդրադառնալով ՀՀ մեկնած պատվիրակության այցի արդյունքների մասին հարցին՝ Արթուր Մոսիյանը տեղեկացրել է, որ այն ՀՀ այցելած առաջին պատվիրակությունը չէ, մինչ այդ խորհրդարանի բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչներն են այցելել, հանդիպել ԱԳ նախարարի, ԱԺ նախագահի, խորհրդարանական խմբակցությունների հետ: «Անձամբ ես այս հանդիպումից սպասելիք չունեմ, որովհետեւ կա սցենար, եւ իշխանությունը 2018թ. բերվել է այդ սցենարն իրականացնելու համար: ՀՀ-ում արտաքին վեկտորի փոփոխություն է տեղի ունենում, որը ցավոտ է լինելու մեզ համար:

ՀՀ-ԱՀ միջպետական հանդիպումներ չկան, դրանք փոխարինվել են Արայիկ Հարությունյան-Նիկոլ Փաշինյան հանդիպումներով, ինստիտուցիոնալ իմաստով կապ չկա: Որոշ կետերի շուրջ Արցախում ներքաղաքական կոնսենսուս կա, բայց այս ուղղությամբ կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվում: Քաղաքական զարգացումներ են ընթանում, հիմա սպասողական վիճակում ենք»,- նշել է Արթուր Մոսիյանը՝ ավելացնելով, որ Արցախում սեփական օրակարգի ձեւավորման անհրաժեշտություն կա:

Նրա խոսքով՝ հիմա առաջնայինը հայրենիքի փրկության հարցն է, ընդդիմության-իշխանության հարց չկա. «Դա չի նշանակում, թե մարդիկ իրենց արածների համար պատասխան չեն տալու: Այս պահին պետք է բոլոր հարցերը թողնել մի կողմ եւ ամեն ինչ անել պետական ինստիտուտների հզորացման համար: Այսօր Արցախի պետականությունը փրկելու խնդիր կա, այն պարագայում, որ ՀՀ իշխանությունները, նաեւ դրսի դերակատարներն ուղղակիորեն հարվածում են պետական ինստիտուտներին»:

ԱՀ ԱԺ «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանը շեշտել է, որ այսօր երիտասարդությունը, ուսանողությունը շատ ավելի մեծ դերակատարություն պիտի ունենան եւ իրենց վճռական խոսքն ու պահանջները ներկայացնեն թե՛ հանրությանը, թե՛ երկրի ղեկավարությանը: Անտարբերությունը միայն ու միայն երկարաձգում է կործանման ճանապարհը, պետք է վճռականություն դրսեւորվի թե՛ ուսանողության, թե՛ քաղաքական ուժերի կողմից:

Բանախոսները պատասխանել են նաեւ սահմանադրական բարեփոխումների, քաղաքական ուժերի կողմից պատասխանատվություն ստանձնելու, Արցախի ապագայի հետ կապված հարցերին:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«Ոսկե արծիվ» եւ «Մարտական խաչ» շքանշանակիրներ Սամվել եւ Նարեկ եղբայրներ

2020թ. սեպտեմբերի 27-ի չարաբաստիկ պատերազմի առաջին իսկ օրերից պատերազմի ողջ դաժանությունը զգացել են Սամվել եւ Նարեկ եղբայրները. 2 եղբայրներ՝ բնավորությանբ տարբեր, ճակատագրով՝ նույնը: Երկու եղբայրները կռվել եւ իրենց կյանքն են զոհաբերել Արցախի փրկության բագինին: Սամվել Ղազարյանն արժանացել է Արցախի հերոսի կոչման եւ պարգեւատրվել «Ոսկե արծիվ» շքանշանով, իսկ Նարեկ Ղազարյանը պարգեւատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով եւ «Մարտական ծառայություն» մեդալով:

Սամվել Գեղամի Ղազարյանը ծնվել է Էջմիածնում, 2000թ. դեկտեմբերի 23-ին, իսկ Նարեկ Գեղամի Ղազարյանը՝ 2002թ. փետրվարի 13-ին: Տղաների մայրը՝ Նուշիկ Մուրադյանը, մասնագիտությամբ մանկաբարձ է եւ աշխատում է Էջմիածնի ծննդատանը, իսկ հայրը՝ Գեղամ Ղազարյանը, շինարար է, սակայն առողջական խնդիրներից ելնելով՝ այժմ տան կից հողամասում զբաղվում է թռչնաբուծությամբ:

Սամվելը եւ Նարեկը Գեղամ եւ Նուշիկ ամուսինների միակ զավակներն էին, եւ նրանց կորստից հետո, մոր խոսքերով, իրենց տունը քանդվել է, կյանքը՝ փլվել:

Սամվելը եւ Նարեկը 3 տարեկանից հաճախել են մանկապարտեզ:

«Սամվելը բնավորությամբ ակտիվ էր, իսկ Նարեկն՝ ավելի պասիվ: Եթե թողնեինք, Սամվելը 1 տարեկանից էլ կգնար մանկապարտեզ: Ես իրենց միշտ ասում եմ՝ իմ «ռաբիզ ու դասական տղաներ»: Ռաբիզը Սամվելն էր, դասականը՝ Նարեկը»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է հերոսների մայրը՝ Նուշիկ Մուրադյանը:

Սամվելը 6.5, իսկ Նարեկը 7 տարեկանից հաճախել է Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան հ.10 դպրոցը: «Սամվելը շատ ընդունակ էր, հեշտ էր յուրացնում դասերը, ուսուցիչների պատմածը բավարար էր սովորելու համար, իսկ Նարեկի հետ ավելի շատ ես եմ աշխատել: Երկու եղբայրներն իրարից շատ էին տարբերվում: Սամվելը շատ ընդունակ էր՝ ի տարբերություն Նարեկի: Սամվելն ավելի շատ օտար լեզուներն էր սիրում՝ ռուսերեն, անգլերեն: Նա սիրում էր անակնկալներ մատուցել ուսուցիչներին: Հնարավոր էր՝ նա քիմիայից ցածր գնահատական ստանար, բայց դասալսումների ժամանակ այնպիսի մի փայլուն պատասխան կարող էր տալ, որ անակնկալի էր բերում ուսուցիչներին: Հիշում եմ՝ մի անգամ Նարեկն ասաց՝ «Մա՛մ, ես ուզում եմ ռուսերեն ե՛ւ հասկանամ, ե՛ւ գրագետ խոսեմ»: Ես ինքս եմ պարապել Նարեկի հետ՝ ինչքան-որ կարողացել եմ: Սկզբում փախչում էր ռուսերենի դասերից: Տանում էի դպրոց, հետ էր գալիս, որովհետեւ իր մոտ չէր ստացվում, իսկ ինչը որ չէր ստացվում, աշխատում էր փախչել դրանից: Ես սկսեցի սովորեցնել, որ ինքը չվախենա, ու կյանքում էլ տղայիս դարձրի անվախ տղա: Նա շատ աշխատասեր էր, եւ երբ որ սկսեց տիրապետել ռուսերենին, արդեն հաճույքով դպրոց էր գնում»,-պատմում է Նուշիկ Մուրադյանը:

Նարեկը շատ էր սիրում մեր հայ գրողներին ու արվեստագետներին: Մոր խոսքով՝ հատկապես Միհր Մկրտչյանին էր շատ սիրում եւ գիտեր նրա մասին ամեն ինչ:

«Հետաքրքիրն այն է, որ նա լավ չէր սովորում, սակայն սիրում էր ուսումնասիրել մեր հայ մեծերի կենսագրությունները, սիրահարված էր Միհր Մկրտչյանին: Այն, ինչ դուր էր գալիս նրան, նա սիրում էր խորանալ եւ ուսումնասիրել»,- ասում է Նուշիկ Մուրադյանը:

Ղազարյան եղբայրները կյանքով լեցուն էին, կենսախինդ, նպատակասլաց: Սամվել եւ Նարեկ եղբայրներն արդեն որոշել էին իրենց ապագան եւ շատ նպատակներ ունեին:

Նարեկը երազում էր հայտնի խոհարար դառնալ, ուզում էր Իսպանիա գնալ: Ընդունվել էր Հայ-ֆրանսիական քոլեջ, սակայն դպրոցի հետ համատեղել չէր ստացվում, ուստի որոշել էր բանակից հետո շարունակել: Իսկ Սամվելը երաժշտության հետ էր կապել իր ապագան. դհոլ էր նվագում եւ արդեն հասցրել էր նաեւ հարսանիքների ժամանակ նվագել: Որոշել էր ծառայությունից հետո կոնսերվատորիա ընդունվել:

Տղաների մեծ երազանքի ճանապարհին, սակայն, նախ հայրենիքի հանդեպ պարտքը պետք էր կատարել: Տղաները բանակ պետք է զորակոչվեին: Առաջինը Սամվելը մեկնեց ծառայության՝ Արցախ, հետո՝ Նարեկը՝ շուրջ մեկ տարի անց:

«Սամվելն ինձ չթողեց գնամ զինկոմիսարիատ, սակայն պատմում են, որ այնտեղ եւս նվագել էր իր դհոլը, ուրախ մթնոլորտ ստեղծել: Ի տարբերություն եղբորը՝ Նարեկն ուրախ չէր. դժվարությամբ գնաց ու անտրամադիր: Շուրջ 2 ամիս ինձ հանգիստ չէր տալիս այն միտքը, որ այդ օրը տղաները բոլորը տխուր էին. ես այդպիսի տխուր պահ չէի տեսել: Նարեկը մի ժամ ինձ գրկել էր ու ասում էր՝ «մամ, ուզում եմ հոտդ քաշեմ, որ չմոռանամ»: Չգիտեմ՝ Նարեկն ինչ էր զգում, այդպես էլ անտրամադիր գնացին, բայց ուզում էր գնալ, իր կամքով էր դիմում գրել, որ իր գնալը չուշացնեն»,- պատմում է Նուշիկ Մուրադյանը:

Նարեկը քիթը վնասել էր, եւ նրա զորակոչվելը պետք է 6 ամիս հետաձգվեր, սակայն իր ծանոթներին իրար խառնելով՝ այնպես արեց, որ ինքը եւս մեկներ ծառայության՝ այն էլ եղբոր մոտ. ուզում էր շուտ գնալ ու շուտ էլ վերադառնալ, որ կյանքից 6 ամիս չկորցնի՝ նպատակներին հասնելու ճանապարհին:

«Վիճակահանության օրը Սամվելը Երեւանից գիշերը ուշ զանգեց, հերթապահության էի, եւ ասաց, որ Ջրական է տեղափոխվում, իսկ ես էլ ասացի, որ Ջրականում ամբողջ Էջմիածինն է ծառայել, ու ոչ մեկը դըժգոհ չի եղել, հանգիստ գնա: Նեղսրտել էր, որ ընտանիքից ու տնից մի քիչ հեռու է լինելու, դե ես էլ մի քիչ ուժեղ մամա եմ, ասացի, որ կհասցնենք իրար հետ շըփվել, ու ամեն բան լավ կլինի»,- նշում է մայրը:

Սամվելի զինվորական երդման արարողությանը ներկա էր նաեւ ընտանիքը: Նուշիկ Մուրադյանի խոսքով՝ ինքը շատ էր նեղվել՝ տեսնելով, որ այդ հողերը չէին շենացվում, իսկ Սամվելն էլ կատակով ասում էր, որ ինչպես Ռոբինզոն Կրուզոն էր ասում՝ պատուհանից միայն ծով է տեսնում, այնպես էլ ինքն է միայն սարեր տեսնում:

Ըստ մոր խոսքերի՝ Սամվելը դեմ էր, որ Նարեկն իր մոտ ծառայի, իսկ Նարեկն էլ շուրջ 2 ամիս համոզում էր Սամվելին: Այդ օրն էլ շուրջ 3 ժամ համոզեց ու ասաց՝ «ես քեզ մոտ պետք է գամ ու վերջ», ու կամավոր գրել է, որ առանց վիճակահանության իրեն տեղափոխեն եղբոր մոտ:

Հետո Նարեկը մոր հետ խոսելիս ասել էր, որ իր եւ Սամվելի առաջին հանդիպումը զորամասում ամենաերջանիկ օրն էր իր կյանքում, քանի որ շատ էր կարոտել եղբորը:

Իր ծառայության ավելի քան 15 ամիսների ընթացքում Սամվելը երբեք չի բողոքել ծառայությունից, շատ արագ հարմարվել էր ծառայությանն ու նոր շրջապատին:

Սեպտեմբերի 27-ի չարաբաստիկ օրը Նուշիկ Մուրադյանը հերթապահության էր, երբ առավոտյան իմացավ պատերազմի մասին:

«Այդ ժամանակ Սամվելն էր զանգել ինձ, ինչ-որ դաժան ու սուր ցավ զգացի: Նա ինձ հանգստացրեց, ես ինձ հավաքեցի ու ասացի՝ «Տղա՛ ջան, ամեն ինչ լավ է լինելու: Եթե պետք լինի՝ մայրդ հաջորդ իսկ րոպեին կողքիդ կլինի. բուժքույր եմ», իսկ նա պատասխանեց՝ «դա է պակասում, չէ՞ որ 2 հերոս որդիդ արդեն այստեղ են, եւ հորդորեց ինձ հոր առողջությանը հետեւել»,- հիշում է Ն. Մուրադյանը:

Մարտական ընկերները պատմում են, որ Սամվելն անգամ մարտի դաշտում էր դհոլ նվագում, բոլորի տրամադրությունը փորձում բարձրացնել: Տղաների խոսքով՝ օգնում էր վիրակապել բոլոր ընկերներին, հագուստ գտնում նրանց համար:

Հետո ծնողները պետք է իմանային, որ մինչ Արծրուն Հովհաննիսյանը հաղթանակով խաբում էր ժողովրդին, իրենց զավակները հոկտեմբերի 5-ին Ջրականում մասնակից են եղել շատ արյունալի մարտի ու կոտորածի:

«Այն ժամանակ, երբ Արծրունը խաբում էր մեզ, Սամվելը մեզ մոտավոր հասկացրեց, որ հյուրանոցն (խմբ. -նկատի ունի զորամասը) այլեւս չկա, իսկ իրենց սպաներից մեկը, իր վրա վերցնելով հարվածը, հորդորել էր տղաներին հետ նահանջել ու փրկվել: Տղաների մի մասը կռվելով կարողացավ նահանջել ու փրկվել, շատ դաժան վիճակով, վիրավորներին շալակած հասել էին Հադրութ»,- պատմում է Ն. Մուրադյանը:

Հադրութում Նարեկն ու Սամվելն ամբողջ գիշեր փնտրում եւ միայն լուսաբացին են կարողանում գտնել իրար, եւ հենց այդ ժամանակ էլ զանգում են ծնողներին եւ ասում, որ վտանգն արդեն անցել է, այլեւս չանհանգստանան:

Ծնողները՝ շոկի մեջ, իսկ եղբայրները, իրար գրկած, ցնծության մեջ էին իրար գտնելու առիթով ու չգիտեին էլ անգամ, թե ինչ է սպասվում իրենց:

Հադրութից Նարեկին, ով անգամ զինվորական երդումը դեռ չէր տվել, Ջալալ Հարությունյանի հրամանով Վահան Իշխանյանը տեղափոխում է:

«Հոկտեմբերի 9-ին Նարեկը զանգեց ու ասաց, որ ապահով տեղ են տանում, բայց իր սրտով չէր, անտրամադիր էր: Հարցրի՝ ուր են տանում, ասաց, որ Սամվելի մոտ, իսկ ես գիտեի, որ Սամվելը Ջրականի՝ մեզ մնացած մասերում էր կռվում: Նարեկենց տարան այն գյուղերը, որտեղ վարձկաններն էին, ու երեխաներին սպանեցին»,- ասում է Ն. Մուրադյանը:

Մոր խոսքով, երբ որ եղբայրները հանդիպել էին Հադրութում, Սամվելը ջղայնացել էր շատ ու պահանջել էր հրամանատարներից, որ Նարեկին առաջնագիծ չուղարկեն, որ 2 եղբայր մի տեղ չպետք է լինեն, եթե պետք է՝ ինքը կկռվի, կզոհվի, բայց եղբայրը պետք է հասնի ծնողներին:

«Բոլորն էլ լսել են տղայիս խոսքերը: Անգամ ասում են, որ Սամվելը զենք էր հանել: Նրան խոստացել էին եղբորն ուղարկել, սակայն խոստումը ոչ միայն չեն կատարել, այլեւ հետ են ուղարկել դեպի մսաղաց՝ ահաբեկիչների մոտ՝ շատ լավ իմանալով, թե ուր են ուղարկում»,- նշում է տղաների մայրը:

«Նարեկը վիրավորվել էր եւ 12 ժամ տանջվելով՝ զոհվել: Ընկերները նրան փաթաթել էին վերմակով ու հողի տակ պահել տներից մեկի բակում: Ամուսինս անընդհատ դիմում էր էստեղ-էստեղ, որ օգնեին: Գիտեինք, թե որ տան բակում է: Ուղարկեցին Արցախ, եւ մեզ օգնեց Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը: Մենք խնդրել էինք մեր տղայի մարմինը, նա էլ կատարեց իր խոստումը. Նարեկին գտանք ու բերեցինք տուն», -ասում է Ն. Մուրադյանը:

Սամվելը հատուկ առաջադրանք է կատարում, որտեղ էլ զոհվում է ԱԹՍ-ի հարվածից՝ հոկտեմբերի 12-ին, եղբոր մահվանից 10 ժամ տարբերությամբ:

Սամվելի մարմինը երկար ժամանակ ծնողները չէին կարողանում գտնել:

«Սամվելի մարմինը հասցնում են Հերացի հիվանդանոց, որտեղ էլ կոդը սխալ է գրանցված լինում, եւ մենք մինչեւ օգոստոս մեր տղային ենք որոնում գերիների, անհետ կորածների մեջ: Բոլորը փնտրում էին, բացի ինձնից, որովհետեւ ես երազ էի տեսել, որտեղ 2-ն էլ ինձ հրաժեշտ էին տվել: Իր դաջվածքով է նույնականացվում մարմինը, որից հետո ԴՆԹ-ն համընկնում է իմ, եղբոր, ապա նաեւ ամուսնուս ԴՆԹ-ի հետ»,- նշում է Ն. Մուրադյանը:

Որդիների գերեզմանները կառուցել է հայրը՝ իր իսկ ձեռքերով, իսկ Էջմիածնի Զվարթնոց թաղամասի այն բակում, որտեղ նրանք իրենց մանկությունն են անցկացրել, հերոս եղբայրների հիշատակը հավերժացնող հուշակոթող է բացել նրանց հայրը՝ Գեղամ Ղազարյանը, իսկ օծումը կատարել է Արմավիրի թեմի հոգեւորական Տեր Գեղամ ավագ քահանա Քեսաբլյանը:

Հուշակոթողի բացման արարողությանը ներկա էր նաեւ ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը:

«Հազարամյակներ շարունակ մենք պայքարել ենք մեր գոյատեւման, մեր հավատքի ու մեր հայրենիքում արժանապատիվ ապրելու մեր իրավունքի համար, եւ այս պատերազմը դրա շարունակությունն էր: Բազմիցս նշել եմ, որ սա մեր հերթական Ավարայրն է եղել. թեեւ կորցրել ենք մեր մարտական հաջողությունը կամ արձանագրել ոչ այնքան ընդունելի ավարտ, բայց գոյատեւելու, պայքարը շարունակելու, երկիր կառուցելու, հայ ու քրիստոնյա մնալու իրավունք ենք վաստակել: Այդ իրավունքը վաստակել ենք Սամվելի, Նարեկի եւ մեր հազարավոր տղաների շնորհիվ»,- իր խոսքում նշել է ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը՝ երախտագիտություն հայտնելով Ղազարյանների ընտանիքին:

«Չեմ կարող նկարագրել, թե որքան ճիշտ էր ամուսինս հուշակոթողի կառուցման հարցում, որովհետեւ ամբողջ այդ տարածքի երեխաները կարծես փոխվել ու ավելի էին լրջացել, որովհետեւ ամենափոքր երեխան էլ աշխատում էր հուշակոթողը կառուցելու ժամանակ: Նույնիսկ 5 տարեկան երեխան էլ մի փոքր քար գրկած գալիս էր: Բոլորը համախմբվել էին՝ ե՛ւ երիտասարդները, ե՛ւ մեծերը, կանայք ավլում էին, մաքրում, ծաղիկներ բերում: Այժմ բոլորը ջուր են խմում՝ հետո նոր գնում: Իմ կարծիքով՝ ճիշտ բան նախաձեռնեցինք»,- նշում է Նուշիկ Մուրադյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ ուսուցիչների հիմնական առաքելություն

Բոլոր ժամանակներում անգնահատելի է եղել ուսուցիչների դերը: Խաղաղ ժամանակ գիտության, իսկ պատերազմի ժամանակ հայրենիքի զինվորներ են դառնում ուսուցիչները: 44-օրյա պատերազմի ժամանակ էլ այդ նույն ուսուցիչները, զենք վերցնելով, կանգնեցին իրենց աշակերտների կողքին եւ սեփական օրինակով դարձան այն արիության դասերն իրականություն դարձնողները, որը խաղաղության օրերին սովորեցնում էին սերունդներին: Այդ նույն ուսուցիչների նվիրական աշխատանքի արդյունքն էր այն սերունդը, որ տարիներ շարունակ անձնվիրաբար պաշտպանում էր մեր հայրենիքը, իսկ պատերազմի օրերին սեփական կյանքը չէր խնայում մի բուռ հող անգամ թշնամուն չզիջելու համար:

2020թ. պատերազմից եւ կրած պարտությունից հետո կրկին ուսուցիչների ուսերին է մնացել սերունդներին կրթելու, դաստիարակելու, նրանց մոտ հույսը եւ կրկին հաղթելու հավատը վերականգնելու վեհ առաքելությունը: Նրանք են մեր լեզվի, հայրենիքի, հավատքի հարատեւությունն ապահովում, նրանք են սերունդների մեջ սերմանում հայրենապաշտության վեհ գաղափարները: Նրանց անխոնջ աշխատանքի շնորհիվ են հաղթահարվում փորձությունները եւ նրանց դաստիարակության շնորհիվ են տարիներ ի վեր հայ ազգի սերունդներն ամենածանր վիճակից անգամ փյունիկի պես հառնել ու շարունակել իրենց երթը:

Հոկտեմբերի 5-ին նշվել է ուսուցիչների մասնագիտական օրը, ինչի առթիվ «Ապառաժ»-ը զրուցել է 40 տարվա մանկավարժական փորձ ունեցող, Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի տնօրեն տիկին Լաուրա Մարտիրոսյանի հետ՝ ուսուցչի առաքելության եւ պատերազմից հետո ստեղծված խնդիրների մասին:

Լաուրա Մարտիրոսյանը պատմության ուսուցչուհի է: Իր երկարամյա վաստակի 22 տարիները նա նվիրել է Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցին:

Խոսելով մեր օրերում ուսուցչի առաքելության մասին՝ տիկին Մարտիրոսյանը նշեց, որ որպես ուսուցիչ՝ իր առաքելությունը համարում է աշակետների ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացումը, չնայած որ ռազմահայրենասիրական դաստիարակությունը միշտ էլ շատ բարձր մակարդակի վրա է եղել դպրոցում:

«Տարիներ շարունակ իմ գերխնդիրը հենց դա է եղել: Այդպես եմ ապրել, այդպես եմ կերտել մանկավարժի իմ կենսագրությունը, այդպես եմ առաջ տարել իմ գործը ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ: Ես միշտ ձգտել եմ սերունդներին դաստիարակել նժդեհյան գաղափարախոսությամբ: Բարձրագոչ չհամարեք. մեր կատարած գործերի, տարիների խորաշերտ աշխատանքի արդյունքում հայրենասիրական դաստիարակությունը ոչ թե իրավիճակային բնույթ է կրել, այլ համակարգված եւ բազմաբնույթ, հետաքրքիր, սերունդների ոգին բարձրացնող, հայի հպարտությունը բարձրացնող»,- ասել է Լ. Մարտիրոսյանը:

2020թ. 44-օրյա չարաբաստիկ պատերազմից հետո տիկին Մարտիրոսյանը շարունակ մտորումների մեջ է՝ փնտրելով պարտության պատճառը:

«Ինչո՞ւ այսպես ստացվեց: Եթե ասեմ, որ մեր դաստիարակած սերունդը հայրենասեր չէր, հայրենասեր էր: Թշնամին ուժեղ էր, այո՛, Թուրքիայի օգնությամբ ուժեղ էր, բայց ամեն դեպքում ես ուզում եմ մի փաստ ընդգծել, որը ոչ թե կարծրատիպ է, այլ իմ համոզմունքն է. սերունդների դաստիարակության հարցում մենք մեր առաքելությունը ճիշտ ենք տարել: Հայացք նետելով անցյալին՝ կարծես որեւէ բան բաց չենք թողել: Ինչ-որ տեղ առկա բարոյահոգեբանական ընկճվածության հիմնական պատճառը երեւի մեր հասարակության սոցիալական շերտավորվածությունն էր: Ես արծաթապաշտության մեջ եմ տեսնում պարտության պատճառը. ո՛չ ժողովրդի, ո՛չ ամբողջ ազգի, այլ մասնավոր, անհատ մարդկանց: Բացի այդ, իշխանության լծակներ ունեցող մարդիկ պետք է քարավանը ճիշտ ճանապարհով տանեին: Մենք՝ որպես մի հզոր կոլեկտիվ, որպես ստորաբաժանում, մեր գործը լավ ենք կատարել: Ինչո՞ւ այսպես ստացվեց. այդ հարցը երեւի ոչ թե մեկ, այլ մի քանի բացասական պատասխան ունի: Մեր նվիրյալ տղաները, այնուամենայնիվ, կանգնած են եղել. պետք է խոստովանենք սա եւ նրանց փառքը բարձունքում պահենք»,- նշում է Լ. Մարտիրոսյանը:

Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցը պատերազմից հետո իր դռներն առաջինն է բացել աշակերտների համար:

«Պատերազմից հետո՝ նոյեմբերի 17-ին, մեր դպրոցը քաղաքում եւ ամբողջ հանրապետությունում միակ դպրոցն էր, որ իր դռները բացեց: Նոյեմբերի 17-ին, երբ վերարկուս հագել եւ դուրս էի եկել փողոց, պատերազմի գաղջ հոտը դեռեւս իշխում էր քաղաքում: Նայում էի շենքերին, որտեղ լվացքներ կային փռված պարանների վրա, եւ ըստ այդմ հասկանում, թե որ շենքում քանի մարդ կա: Նոյեմբերի 17-ին քաղաքում հատուկենտ մարդիկ էին երեւում: Փողոցներում քիչ մարդիկ կային, ովքեր զարմանում էին՝ այս կինը ո՞ւր է գնում: Այդ կինը՝ դպրոցի տնօրենը, իր մի քանի ուսուցիչների հետ գնում էր բացելու դպրոցի դռները: Պետք է նշեմ, որ մեր պահակները, տնտեսվարը պատերազմի օրերին չեն լքել դպրոցը: Պատերազմի սկզբից մենք էլ չենք լքել դպրոցը, որպեսզի անհրաժեշտության դեպքում քաղաքացիական պաշտպանությունը կարողանանք կազմակերպել:

Նոյեմբերի 17-ին բացեցինք դպրոցի դռները, եւ մեր դպրոցը դարձավ ոչ միայն մեր աշակերտների, այլեւ Արցախի բոլոր աշակերտների դպրոցը: Աշակերտներ եկան Արցախի տարբեր գյուղերից: Սա մինչեւ դեկտեմբերի առաջին օրերը, որից հետո արդեն քաղաքի մնացած դպրոցներն էլ բացվեցին. ե՛ւ երեխաները, ե՛ւ ուսուցիչներն արդեն սկսեցին հաճախել դպրոցներ, բայց մինչ այդ մեր դպրոցը հավաքական դպրոցի դեր էր տանում»,-պատմում է դպրոցի տնօրենը:

Չարաբաստիկ պատերազմը ստիպեց, որ փոխվեն նաեւ ուսուցիչների մոտեցումները աշակերտների դաստիարակության հարցում: Տիկին Մարտիրոսյանին թվում էր, թե դժվար պետք է լինի նորից դասարան մտնել, աշակերտների աչքերին նայել: Տարիներ շարունակ սերունդներին հաղթանակի շնչով ու բերկրանքով դաստիարակած ուսուցիչներին դժվար էր պատկերացնել, թե ինչպես պետք է դաստիարակվեն գալիք սերունդները:

«Ես մտածում էի, թե ինչքան դժվար պետք է լինի մեզ համար, ինչ պետք է անենք: Ընկճված էինք, իրավիճակը ոգեկոչող չէր, բայց, այնուամենայնիվ, երբ մտնում ես աշակերտների մոտ, երբ քեզ են նայում սեւաչ սիրուն տղաներ, քո հայ սերունդը, դու տարերքի մեջ ես մտնում: Ես ավելի քան լավ եմ սկսել դասավանդել, անկեղծ եմ ասում, մեր բոլոր ուսուցիչները դա կփաստեն: Մենք մեր աշխատանքը ավելի քան հայրենասիրական ոգով ենք շարունակել: Մտել ենք դասարան աշակերտների ոգին բարձրացնելու նպատակով, նրանց բացատրել, որ չպետք է ընկճվել, այլ պետք է դասեր քաղել, առաջ նայել. սա էր իմ՝ որպես ուսուցչի գործ դարձած կարգախոսը: Աշակերտները պետք է բարձրանան եւ առաջ նայեն, իսկ ինչպե՞ս. ճիշտ քայլերով ու գործով՝ լավ սովորելով, լավ աշխատելով եւ առ հայրենիք սերը չպակասեցնելով: Սերը միայն որպես զգացմունք՝ ոչնչի չի օգնում: Այդ սերը, այդ նվիրումը պետք է գործ դառնա»,- ասում է տիկին Մարտիրոսյանը:

Դաժան պատերազմը չի շրջանցել ոչ ոքի: Այն իր բացասական հետքն է թողել նաեւ աշակերտների հոգեբանության վրա: Այսօր հ.2 հիմնական դպրոցում սովորում են նաեւ տեղահանված եւ զոհված զինծառայողների երեխաներ, որոնց հատուկ վերաբերունք է ցուցաբերվում դպրոցի կողմից՝ նրանց նորից կյանքի գույները վերադարձնելու համար: Տիկին Մարտիրոսյանի խոսքով՝ աշակերտների մոտ այն խոսակցություններն ու կարծիքներն են, ինչ-որ գոյություն ունի հասարակության մեջ:

«Երեխաները պետք է ճիշտ դաստիարակներ ունենան: Տանը ամեն ինչ կխոսեն, հասարակության մեջ ամեն ինչ կխոսեն, բայց ուսուցիչները պետք է միշտ իրենց գաղափարներով բարձր լինեն, իմանան՝ ինչ են ուսուցանում, եւ անպայման միշտ վեհ գաղափարներով դաստիարակեն երեխաներին: Իհարկե, մտնելով դասարան, դու տեսնում ես՝ երեխան ինչ է մտածում, անգամ ասում են՝ այս մեկը դավաճան է, այն մեկը դավաճան է: Դու պետք է կարողանաս ճիշտ ուղղորդել դասարանը: Նրանք երեխաներ են՝ իրենց լսածն են ասելու, իրենց տեսածն են պատմելու: Ուսուցիչը պետք է կարողանա ե՛ւ գաղափարապես, ե՛ւ հոգեպես բարձրացնել ու նրանց մեջ ներդնել այն միտքը, որ պետք է ապրեն հայրենիքում, ապրեցնեն հայրենիքը. ուսուցչի առաքելությունը դա պետք է լինի: Երեխաների մոտ, իհարկե, ընկճվածություն կա: Միայն մեր դպրոցում աշակերտների սոցիալական կազմը դիտարկելիս նկատում ենք՝ ինչքան տեղահանված, տունը կորցրած, զոհված ազատամարտիկների երեխաներ կան: Ցավը խորն է, ծով օվկիանոս, պետք է կարողանանք այդ ցավի միջից աճեցնել ցասումը, այդ ցավի օվկիանոսում նրանց գլուխը բարձր պահել, որպեսզի այդ օվկիանոսը նրանց չկլանի ու չտանի հոռետեսության ու ընկճախտի գիրկը: Նրանց մեջ պետք է սերմանել, որ նրանք ամենակարող են: Ես միշտ ասում եմ նրանց, որ ուր էլ լինեն՝ պետք է մտածեն, որ ամենալավն ու ամենակարող են, որ զգան՝ ուժ են, կարող են դառնալ ուժ, իրենց ներաշխարհում պոտենցիալ կա, մեծ հնարավորություններ թե՛ գաղափարական, թե՛ ֆիզիկական, ու զարգացնեն իրենց բոլոր կարողություններն ու հմտությունները»,- նշում է Լ. Մարտիրոսյանը:

«Արցախյան առաջին պատերազմում Բեկորի գլխավորած առաջին վաշտը հենց այս շենքի պատերից ներս է գիշերել, այստեղ են իրենց պլանները գծել, եւ այս շենքի բակից են տղաները մարտի մեկնել: Դպրոցում սովորելն ու սովորեցնելը, որը կրում է մեծ հայրենասեր, դաշնակցական մարտիկ Աշոտ Ղուլյանի անունը, տարիներ շարունակ ավելի քան պարտավորեցնող է եղել ուսուցչական անձնակազմի եւ աշակերտների համար:

Տարիներ շարունակ մեր դպրոցում հազարավոր աշակերտների ընդունել ենք բարձրահունչ հայրենասիրական երգերի ներքո, տարիներ շարունակ եւ մինչեւ այսօր երեխաները դպրոց հաճախելով մտնում են փառքի սրահ, որտեղ ցուցանակները, ցավոք սրտի, շատացել են, եւ գլուխ խոնարհում տղաների նկարների առջեւ, ապա բարձրանում դասարան: Աշոտ Ղուլյանը իմաստուն շատ պատգամներ է թողել իր հետնորդներին: Եթե մեզնից յուրաքանչյուրը՝ ռամիկ աշխատավորից մինչեւ իշխանություններ, իրենց գործը կատարեն՝ ինչպես որ հարկն է, հենց դա կհամարվի իսկական հայրենասիրություն: Մեր ընկած տղաների շարքերը հրամայում են մեզ ճիշտ ապրել, ճիշտ գործել, բառը դարձնել գործ», - նշում է Լ. Մարտիրոսյանը:

Վերջերս՝ սեպտեմբերի 6-ին, դպրոցի բակում տեղադրվել է լեգենդար մարտիկի կիսանդրին: Գաղափարը, որը տարիներ շարունակ կար, իրականություն է դարձել ՀՅԴ-ի նախաձեռնությամբ եւ ավստրալահայ բարերար Շանթ Կրաջյանի հովանավորությամբ:

«Փառքի սրահում մենք ունենք Բեկորի կիսանդրին, բայց ավելի լավ կլիներ, եթե դպրոցի բակում եւս տեղադրվեր: Այդ մտահաղացումը կար ե՛ւ դպրոցի, ե՛ւ ՀՅԴ կուսակցության կողմից: Տարիներ շարունակ խոսում էինք, շատ անգամներ ներկայացուցիչներ են եկել այդ հարցով, սակայն ապարդյուն: Այս անգամ դպրոց այցելեցին Դավիթ Իշխանյանը, քանդակագործ Յուրի Հովհաննիսյանը եւ Սերգեյ Ադամյանը»,- պատմում է տնօրենը:

Ինչպես ամեն մի դպրոց, այնպես էլ Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցն ունի իր խնդիրները, սակայն տնօրինությունն ու աշակերտությունը չեն տրտնջում, այլ փորձում են քայլել իրավիճակի հետ եւ եղած պայմաններում հնարավորինս բարձր մակարդակով կազմակերպել ուսումնական գործընթացը:

→ 6

Հավատում եմ, որ կարող ենք հաղթել

Արցախյան երրորդ պատերազմից հետո Արցախում ստեղծված նոր իրավիճակին համահունչ սրբագրվել է այստեղ ապրող յուրաքանչյուր հայի կյանքի բանաձեւը. ամեն ոք մտորում է դրանից դուրս գալու ուղիների, միջոցների մասին: Գլուխը կախ իր բաժին պատասխանատվությունը պատվով կրող արցախցիներն են տալիս ապագայի տեսլականը, հուսադրում, որ ամեն ինչ կորած չէ:

ՀՅԴ Մարտակերտի կոմիտեի անդամ Ալիկ Զաքարյանը ծնվել է 1984թ. Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում: Իր կյանքի ընթացքում երեք պատերազմների ականատես է եղել, երկուսին՝ անձամբ մասնակցել: 1991թ. հաճախել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, պատերազմն սկսվելուց հետո ստիպված գյուղից հեռացել ու որոշ ժամանակ անց վերադառնալով՝ շարունակել ուսումը: 2001թ. ավարտել է դպրոցը եւ ընդունվել Արցախի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի «Ագրոնոմիա» բաժինը: 2002-2004թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայությունը, որի ավարտից հետո շարունակել է ուսումը: 2007թ. ավարտել է համալսարանական կրթությունը:

2009թ. ընդունվել է Մարտակերտի վարչակազմի գյուղատնտեսության բաժինը՝ որպես ագրոնոմ: Այնտեղ աշխատել է 9 տարի, հետո տեղափոխվել «Արցախէներգո»-ի Մարտակերտի մասնաճյուղ՝ որպես տեղամասի պետ:

Մանկուց համակիրն է եղել Դաշնակցության գաղափարների, բայց դպրոցական տարիներին դաշնակցականների հետ կապ հաստատելու հնարավորություն չի եղել: «Դաշնակցականներ կային գյուղում, բայց հիմնականում ավագ սերնդից էին: Ուսանողական տարիներին եմ միացել ՀՅԴ Արցախի երիտասարդական միությանը, հետո կուսակցական երդում տվել: Դաշնակցություն մտել եմ այն համոզմունքով, որ Արցախի առջեւ ծառացած լրջագույն խնդիրների լուծումը պիտի դաշնակցականը տա: Սա էր կուսակցության շարքեր մտնելու իմ հիմնական նպատակը. մաս կազմել այդ խնդիրների վերհանմանն ու լուծմանը»,- նշում է Ալիկ Զաքարյանը:

ՀՅԴ Մարտակերտի կոմիտեի անդամի խոսքով՝ Սփյուռքում Դաշնակցության ունեցած մեծ ներուժի միջոցով հնարավոր է աշխարհին ճանաչելի դարձնել Արցախը: Դրան ականատես ենք եղել 2020թ., երբ Սփյուռքի բազմաթիվ հայկական համայնքներ ոտքի են կանգնել եւ ցույցերով, տարբեր ակցիաներով աշխարհին հաղորդել, որ կա սակավաթիվ բնակչությամբ մի երկիր, որի քաղաքացիների առջեւ կյանքի եւ մահվան խնդիր է դրված, պայքարում է իր լինել-չլինելու համար: «Այժմ Դաշնակցությունը կարող է Արցախում գյուղատնտեսության տարբեր ճյուղեր, բիզնես ոլորտներ զարգացնել, որպեսզի երկիրը կարողանա նորից ոտքի կանգնել»,- կարծում է նա:

Խոսելով այստեղ ապրողների պարտականությունների մասին՝ Ալիկ Զաքարյանը նշում է, որ պետք է ռեալ նայել իրականությանը եւ ըստ այդմ քայլեր ձեռնարկել. «Ցանկացած քաղաքացի պիտի գիտակցի, որ Արցախը չունի կարգավիճակ, պարտվել է պատերազմում, իսկ հզորանալու համար ռեսուրսներ են պետք: Դրանք ձեռք բերելը ես տեսնում եմ միայն գյուղատնտեսության զարգացման մեջ: Եթե անասնապահությունն ու գյուղատնտեսությունը զարգացնենք, պետությունը կհզորանա ու նրա հետ հաշվի կնստեն: Արցախում ցանկացած մշակաբույսի պահանջարկ կա, իրացման խնդիր չի լինելու: Մեր հողատարածքներն այսօրվա դրությամբ բավարարում են Արցախի բնակչությանը: Բայց, ցավոք սրտի, չեն մշակվում»:



Ապրիլյան եւ 44-օրյա պատերազմների մասնակիցը նշում է, որ մինչեւ 2016թ. պատերազմը իրենց սերնդից ոչ ոք չէր պատկերացնում, թե ինչ է պատերազմը: «Արցախյան առաջին պատերազմի ժամանակ երեխա էինք. պայթյուններ, հրաձգության ձայներ լսել ենք, բայց չէինք հասկանում, թե ինչ է զոհվելը, ընկեր կորցնելը, հայրենիք կորցնելը»,- ասում է նա:

«2016թ. դիրքերից իջնելուց հետո վստահ էինք, որ բոլոր թերությունները կվերացվեն, ու այս անգամ առաջնագիծ հասնելով՝ կտեսնենք զինվորի ապահովության բոլոր պայմանները բավարարված, բայց այդպես չեղավ: Չնայած դրան՝ մեր զինվորը չի պարտվել, մեզ մոտ զինվոր չի նահանջել: 106 դիրքում 9 ժամ մարտ էր ընթանում, չորս հոգի էին մնացել, բայց դիրքը չեն թողել: Այն բոլոր դիրքերի «սիրտն» էր: Եթե վերցնեին, մյուսներին հեշտությամբ կտիրեին»,- պատերազմի օրերի մասին պատմում է Ալիկը՝ ավելացնելով, որ ադրբեջանցիները, ի տարբերություն մեզ, շատ գրագետ են գործել ու անցած պատերազմից դասեր քաղել:

Իսկ ի՞նչ է անհրաժեշտ հաջորդ հաղթանակի համար. «Ժողովրդի մեջ պիտի կոտրվի այն կարծրատիպը, թե ինչքան էլ կռվենք, պարտվելու ենք: Հիմա ազգի մեջ հայրենասիրություն չի քարոզվում: Մանվել Գրիգորյանը կռվել-հերոսացել է, առաջին հերթին իրեն են բռնում: Մյուս կռվածներին են հարվածի տակ դնում: Կռվից փախածներին պաշտոնի են նշանակում, իսկ վիրավորված, հաշմանդամություն ստացած զինծառայողն անուշադրության է մատնված: Այսքանից հետո ո՞վ կցանկանա մասնակցել պատերազմին ու կյանքը վտանգել»:

Հավատո՞ւմ եք նոր հաղթանակին՝ հարցին հստակ պատասխան ունի: «Հավատում եմ, որ կարող ենք հաղթել: Հիմա պետք է խելք եւ զենք: Զենք, լավ տեխնիկա ու խելոք մասնագետների կարիք ունենք: Թուրքը վախկոտ ազգ է: Կռվից հետո անընդհատ ցույցեր են անում, մի մասն ասում է՝ ինչու ողջ Արցախը չենք վերցրել, մյուս մասն էլ թե՛ մենք այդ հողերը չենք գրավել, տվել են: Իրոք, մեծամասնությունը փաստաթղթով հանձնված տարածքներ են: Շահունյանի շրջանը շատ անառիկ է, այնտեղ միայն խուճապով կարող ես գրավել: Դրա համար Շահումյանի շրջանը մեկ սմ հող չի տվել: Այնտեղ հնարավոր չէր վերցնել, ինչպես Շուշին: Հանձնել են, չեն գրավել: Շահումյանի շրջանի ռազմավարական դիրքն անգնահատելի է: Բացի դրանից, Շահումյանում բնական հանածոներ կան՝ քարածուխ, ոսկի, սնդիկ, պղինձ, նաեւ անտառային, ջրային ռեսուրսներ: Արցախի ու Հայաստանի մեջքը այս շրջանի հանձնումով կոտրվեց»,- ասում է Ալիկը՝ ավելացնելով, որ այժմ Մարտակերտից դեպի Շահումյան շարժվող շարասյուներին ուղեկցող ադրբեջանցիները վախով են անցնում հայերի մոտով:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ ուսուցիչների հիմնական առաքելություն

5 ← «Մեծ դպրոց ենք՝ շատ խնդիրներով, սակայն այսօրվա իրավիճակից պետք է բխեցնենք մեր գործողությունները եւ շարունակենք մեր աշխատանքը. պարզապես լավ կատարենք այն եւ քաղաքական տարաձայնություններից ու ընդհանրապես պատերազմի հետեւանքով հասարակության մեջ գոյացած առկա բացասական էներգիայից երեխաներին հնարավորինս զերծ պահենք: Դպրոցը, պատկերացրեք, որ ժամացույցի սլաքի ճշգրտությամբ շարունակում է իր աշխատանքը, ջանում է ամեն ինչ պահել իր տեղում ու զարգացնել: Խնդիրները շատ-շատ են, բայց աշխատում ենք եղած պայմաններում լավ ուսուցանել, ճիշտ դաստիարակել եւ կրթությունը պահել բարձր մակարդակի վրա»- նշել է Լ. Մարտիրոսյանը:

Տիկին Մարտիրոսյանը հպարտությամբ է խոսում 22 տարի շարունակ իր ղեկավարած դպրոցի հաջողությունների մասին:

«Դպրոցը 2007թ. ճանաչվել է տարվա լավագույն դպրոց, 2008թ.՝ արտադպրոցական եւ արտադասարանական գծով՝ տարվա լավագույն դպրոց: 2015թ. մասնակցել եմ տնօրենների մրցույթին եւ հաղթել լավագույն ռազմահայրենասիրական դաստիարակություն անվանակարգում: Հաղթանակներ են գրանցվել բոլոր ոլորտներում՝ սպորտային, ուսումնական: Եթե ինչ-որ մեկն ինձ հարցներ այս տարիների ամենափառավոր գործի մասին, ես կասեի դպրոցում ռազմահայրենասիրական բարձր մակարդակի դաստիարակության մասին: Թույլ տվեք նշել, որ մեր դպրոցի պատերն անգամ շնչել են հայրենասիրությամբ: Բազմաթիվ արիության դասեր, միջոցառումներ են կազմակերպվել մեր դպրոցում»,- նշում է Լ. Մարտիրոսյանը:

Հաջողությունների հետ մեկտեղ դպրոցը նաեւ անդառնալի կորուստներ է ունեցել: Սերունդները, որոնք տարիներ շարունակ այս դպրոցում ստացել են ռազմահայրենասիրական դաստիարակություն, ոգեշնչվել Բեկորի գաղափարախոսությամբ ու գործերով, սերտել արիության դասերը, 2020թ. սեպտեմբերից սկսած լայնածավալ պատերազմում պետք է գործով ցույց տային, թե ինչքան լավ են սերտել այդ դասերը: Ցավոք, պատերազմ մեկնած սաներից 22-ն այդպես էլ հետ չեն վերադարձել՝ փառավորվելով հայոց անմահների շարքերում: Տիկին Մարտիրոսյանի խոսքով՝ նա կորցրել է իր լավագույն աշակերտներին՝ մեկը մյուսին գերազանցող տղաներին:

Ցավի ու կորստի հետ մեկտեղ տիկին Մարտիրոսյանը լավատեսությամբ ու հավատով է լցված ապագայի հանդեպ, որը փորձում է վարակիչ դարձնել, որովհետեւ ամեն դեպքում ընկճվելու եւ հուսալքվելու իրավունք չունենք:

«Ես լինեմ, թե դուք, պետք է մեր բոլոր քայլերը բխեցնենք իրողությունից, միֆեր չստեղծենք, կարողանանք իրականությունը ճիշտ գնահատել, իրականության հետ հաշվի նստել եւ մեր քայլերը բխեցնել իրականությունից: Ամեն դեպքում, պետք է պայքարենք: Որպես քաղաքացի՝ իմ ցանկությունն այն է, որ մենք պետք է հզորանանք, երբեք չընկճվենք. եթե ընկճվենք ամենավատ ուղիով ենք շարժվելու: Ո՛չ, պետք է պայքարենք, բայց նաեւ այնպես անենք, որ ավելի մեծ հարված չստանանք:

Արցախն ապրի, միշտ մնա հայ, մինչեւ Արաքս կանգնի հայությունը, հադրութեցին նորից բնակվի Հադրութում, մեր Դիզափայտի բարձունքը լինի մեր ձեռքին: Պետք է ընտրենք այն ճանապարհը, որը կտանի դեպի ամբողջական Արցախ, որտեղ հայությունը հավետ կապրի: Ոչ մի արցախցի չպետք է մտածի իր տունը թողնելու մասին, ինչ էլ լինի: Մենք մեր տնից չպետք է դուրս գանք: Թշնամու ուզածը հենց դա է, ուստի հոգեբանական գրոհներ է իրականացնում: Պետք է տանն ապրենք ու կարողանանք տան պատերն ամրացնել:

Հասարակության մեջ ամեն ինչ խոսում են. բոլորը քաղաքագետներ են դարձել, որը տանել չեմ կարողանում: Ամեն մի բառը, առավել եւս՝ հիմա, քաղաքացին պետք է պատասխանատվությամբ արտաբերի, բայց այնպիսի մի հեղհեղուկ իրավիճակում ենք, որ շատ անգամ հիասթափվում եմ անպատասխանատու հայտարարություններից, քննադատություններից, վիրավորանքներից: Դա մթնոլորտը պղտորող է եւ ընդհանուր գործին ոչ մի օգուտ չի բերում»,- իր խոսքը եզրափակում է Լաուրա Մարտիրոսյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեզ ուժ է տալիս մեր համախմբվածությունը

«Արցախյան երրորդ պատերազմում զոհված եւ անհայտ կորած զինծառայողների հարազատների միություն» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 2021թ. փետրվարին՝ հաշվի առնելով հետպատերազմյան ծանր վիճակը, հարյուրավոր անհետ կորածների ճակատագրեր, հազարավոր զոհեր: Նախքան կազմակերպության գրանցումը անհետ կորած համարվող զինծառայողների հարազատների հետ «Արմենիա» հյուրանոցում էին հանդիպումներ տեղի ունենում, որոնողափրկարարական աշխատանքներ էին իրականացնում: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է ՀԿ-ի նախագահ Արմեն Ասրյանը, ով զոհված հերոսամարտիկի հայր է:

Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել

«Գիտակցում էինք, որ կգա ժամանակ եւ «Արմենիա»-ում հավաքները կվերջանան, ահագին մարդկանց ճակատագիր կպարզվի, բայց շատ չլուծված խնդիրներ կմնան: Այդ իսկ պատճառով ծնողների մոտ մտահոգացում էր առաջացել, որպեսզի ստեղծվի ինչ-որ կազմակերպություն, որը հետագայում կզբաղվի զոհված տղաների ընտանիքների, նրանց հիշատակի հետ կապված հարցերով եւ անհետ կորածների ճակատագրով: Այդ մտահոգացումից ելնելով՝ ստեղծվեց այս հասարակական կազմակերպությունը: Մեր կարգախոսն է՝ «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»: Առաջին հերթին նախաձեռնեցինք անհետ կորածների եւ զոհվածների ցուցակների ճշտումը: Դա այն ժամանակ շատ բարդ գործընթաց էր, քանի որ հետպատերազմյան շրջանում գերատեսչությունները կարծես շոկային իրավիճակում էին, նորմալ գործունեություն չէին իրականացնում: Ավելի ստույգ լինելու համար սկսեցինք աշխատել համայնքի ղեկավարների, վարչակազմի ղեկավարների հետ: Այդպես բոլորի հետ կապ պահելով՝ մոտ երկու ամսվա ընթացքում առաջին հերթին ճշտեցինք անհետ կորածների քանակը: Ի սկզբանե շատ մեծ թիվ էր գրանցված: Որոշակի բարդություն կար մայրաքաղաքի բնակիչների դեպքում: Իսկ Քաշաթաղի, Շահումյանի, Հադրութի, Շուշիի շրջանների անհետ կորածների տվյալները ճշտելը հասկանալի պատճառներով լրացուցիչ ժամանակ ու ջանքեր պահանջեց: Ստեփանակերտում դռնեդուռ էինք ընկնում այդ մարդկանց հասցեներով: Դեպք է եղել, որ դուռը ծեծել ենք՝ ասելով այսինչ անհետ կորածի տո՞ւնն է, ասել է՝ «Նրա տունն է, այդ անհետ կորածն էլ ես եմ»: Անհետ կորածների մեր ճշտած թվային տվյալներն ընդունվեցին որպես պաշտոնական տվյալներ:

Այնուհետեւ «Պահեստազորի սպաների միություն» ՀԿ-ի հետ համատեղ տղաների հիշատակին նվիրված տարբեր շրջաններում եւ Ստեփանակերտում հուշ-երեկոներ կազմակերպեցինք, այցելություններ իրականացրինք դեպի Եռաբլուր, նախաձեռնեցինք այցելություններ զոհվածների եւ անհետ կորածների հարազատներին: Հարցաշար մշակեցինք, ուսումնասիրեցինք ընտանիքների սոցիալ-կենցաղային խնդիրները: Նպատակն այն է, որ մենք կապող օղակ հանդիսանանք իշխանության եւ այդ ընտանիքների միջեւ: Եղել են դեպքեր, որ որեւէ բարերար սահմանափակ թվով ընտանիքների աջակցության ցանկություն է հայտնել, եւ այդ առումով օգնել են վերլուծական տվյալները, ու մենք կարողացել ենք հասցեական նշանակություն տալ օգնությանը:

Անհետ կորածների, զոհված զինծառայողների պարգեւատրման հարցերով Արցախում հանձնաժողովներ են գործում, որոնցում մենք ընդգրկված ենք: Զոհված զինծառայողների ցուցակները ճշտելուց հետո համապատասխան գերատեսչությունների միջոցով հասել ենք նրան, որ բոլոր զոհված տղաները ըստ իրենց գործած սխրանքների որեւէ պարգեւի արժանանան:

Մեր ներուժը չի հերիքում Արցախի եւ ՀՀ ողջ տարածքում պատշաճ մակարդակով մեր առաքելությունն իրականացնել, ուստի որոշեցինք միայն Արցախի գրանցում ունեցողների հարցերով զբաղվել: ՀՀ-ում այս ուղղությամբ մի քանի խմբեր են գործում, որոնց հետ կապ ենք պահում, բայց այդ խմբերի միջեւ համախմբվածություն չկա: Քանի որ բռնազավթված տարածքների բնակիչների մեծ մասը ՀՀ-ում են բնակվում եւ դժվար է ուղղակի կապ հաստատել, ինֆորմացիան օպերատիվ փոխանցելու համար օնլայն հարթակում տարբեր խմբեր ենք ստեղծել:

Ամեն ինչ անելու ենք, որ լինենք այս կարգավիճակում գտնվող ընտանիքների կողքին

Մեր մոտեցումն այն է, որ ոչ թե ֆինանսական օգնություն տրամադրենք, այլ օգնենք, որ այդ ընտանիքները ինտեգրվեն հասարակությանը: Պատերազմից հետո կնոջ ուսերին մեծ բեռ է ընկել, եւ կինը պիտի կարողանա նոր իրավիճակում ճիշտ կողմնորոշվել, զբաղմունք ունենալ: Այս իմաստով համակարգչային դասընթացներ կազմակերպեցինք, ներկա դրությամբ 4-րդ, 5-րդ խմբերի հետ ենք աշխատում: Երեք խումբ ավարտել է պարապմունքները, քննությունից հետո համապատասխան հավաստագրեր են տրվել: Աշխատանքի տեղավորման հարցում որոշ խնդիրներ կան, այս հարցով շփումներ ենք ունեցել սոցիալական զարգացման եւ միգրացիայի, տարածքային կառավարման նախարարությունների հետ: Առանց մեր միջամտության էլ հնարավորության դեպքում աշխատանքի հարցում ընդառաջում են:

Այս տարվա սեպտեմբերից անգլերեն լեզվի արտադասարանական պարապմունքներ սկսեցինք զոհված, անհետ կորած զինծառայողների 4-8-րդ դասարանների երեխաների համար: Պարապմունքները եւս այդ ընտանիքներին ինչ-որ աջակցություն են: Բացի դրանից «Լեդի բոյս» գեղեցկության սրահը պատրաստակամություն է հայտնել մի քանի մասնագետներ պատրաստել՝ մատնահարդար, վարսահարդար, դիմահարդար: Արդյունքում մի խումբ կանայք այդ մասնագիտությունը ստացան:

Կազմակերպության գոյության ողջ ընթացքում մեծ խնդիր էր Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանատան կառուցապատումը: Արցախի նահատակների 25-30% այստեղ է հուղարկավորված, պանթեոնը բոլորինս է: Շատ նրբանկատ մոտեցում էր պետք: Քանի որ տղաները մի գաղափարի համար են զոհվել, պետք էր այնպես կառուցել, որ շիրմաքարերը որեւէ ձեւով չտարբերվեն: Աշխատանքային խումբ ստեղծվեց մեր միության ներկայացուցչի, քարի մշակման վարպետի եւ քաղաքապետի տեղակալի մասնակցությամբ: Նրանք գործուղվեցին ՀՀ, ուսումնասիրեցին քարի մշակման խոշոր գործարանները: Զուգահեռ շինարարությունն էր ընթանում, որտեղ եւս բարդություններ կային. ռելիեֆի հետ կապված աշխատանքները դանդաղ էին ընթանում: Հասկանալով, որ երկրորդ տարելիցին էլ հնարավոր է չհասցնեն աշխատանքներն ավարտել, պահանջեցինք, եւ եւս մեկ շինարարական կազմակերպություն սկսեց աշխատել: Այսօր հանգստություն ես ապրում՝ տեսնելով գերեզմանոցների նույնատիպությունը, հավասարությունը: Զգտելու ենք այնտեղ պահպանել այդ սկզբունքը, ճիշտ է ծնողի սիրտը շատ բան է ցանկանում, բայց պետք է հասկանանք, որ սա ընտանեկան գերեզմանոց չէ, պանթեոն է, որն ունի իր կարգուկանոնը, պահանջները: Այստեղ ծնողները ըմբռնումով պետք է մոտենան:

Պատերազմի ընթացքում եւ հետպատերազմյան ծանր ժամանակաշրջանում Վերածնունդի հրապարակում ինքնաբուխ տեղադրվել էին հերոսամարտիկների տարբեր չափի, տարբեր որակի նկարներով վահանակներ: Նկարներն այդտեղից տեղափոխելու խնդիր էր առաջացել: Սա շատ ցավոտ հարց էր, եւ պետական մարմիններից ոչ ոք չէր համարձակվում մոտենալ հարցին, որովհետեւ ծնողները բորբոքված էին, վերքերը թարմ, ցավը շատ խորը: Որոշեցինք այդ բեռը եւս վերցնել մեզ վրա եւ կազմակերպել աշխատանքները: Ուսումնասիրելուց հետո ամենահարմար տեղը համարվեց Ստեփանակերտի Ազատամարտիկների պուրակը: Սկսեցինք նկարների հավաքագրումը, սա եւս շատ բարդ աշխատանք էր, քանի որ շատ դեպքերում նկարների որակները չէին համապատասխանում: Ներկայումս պուրակում 10 հուշատախտակի վրա տեղադրված են 1404 հերոսամարտիկների նկարներ: Բոլորը Արցախից չեն, 700-ին մոտ նահատակներ ՀՀ-ի գրանցում ունեն:

Գալիք տարվա հունվարի 1-ից որոշել ենք այցելել այն զոհված տղաների ընտանիքներին, ում ծննդյան հոբելյանական տարին է լրանում:

Ընտանիքների բնակարանային ապահովման հարցը մշտապես ուշադրության կենտրոնում ենք պահում, անհատական հարցերով եւս փորձում ենք միջնորդել, լուծել խնդիրները: Մանր հարցեր կան, որոնք համատեղ ուժերով ավելի հեշտ են լուծվում:

Մեր կարեւոր սկզբունքներից մեկը ապաքաղաքական լինելն է: Երբեք չենք շահարկի տղաների անունները քաղաքական խաղերի մեջ մտնելով: Ամեն ինչ անելու ենք, որ լինենք այս կարգավիճակում գտնվող ընտանիքների կողքին:

Դեռեւս համբերատար սպասում ենք

Քրեական գործերի ուղղությամբ եւս աշխատանք ենք տանում, մասնակցում ենք դատավարական գործընթացների: Կարեւոր գործեր կան, որոնք անմիջապես իմ ուշադրության կենտրոնում եմ պահում: Դրանք առնչվում են Ջալալ Հարությունյանին առաջադրված մեղադրանքներին: Առաջինը՝ տխրահռչակ հակահարվածի մասին որոշումն էր, որը մեր բանակի ողնաշարը ջարդել է, եւ ունեցել ենք մեծ ճեղքվածք, երկրորդը՝ Ցորի դիվիզիոնի, Դ-20 դիվիզիոնի տղաների զոհվելու փաստն է, որի կազմում էր նաեւ որդիս: Դեռեւս համբերատար սպասում ենք, բայց այդ համբերությունն ունի վերջ: Մի քանի տեղ բարձրաձայնել, հորդորել եմ, որ այս գործընթացները ականջի հետեւ չգցեն, այնպես չանեն, որ թեհլիրյաններ ծնվեն: Սա վախեցնելու համար չեմ ասում, պիտի հասկանալ ծնողների ներքին ապրումները: Մարդիկ կան միանուագար որդի են կորցրել, նրանք այլեւս կյանքի իմաստ չեն տեսնում, իսկ եթե չկա նաեւ արդարադատության, սա եւս կրկնապատկում է նրանց ջղայնությունը, վրեժխնդրությունը:

Գերիների հարցը քաղաքականացված է

Ճշտված տվյալներով ԱՀ-ից 2020թ. պատերազմի ընթացքում զոհվել է 763 զինծառայող, 31-ը անհետ կորած են: Բացի դրանից, քաղաքացիական 20 անձ անհետ կորած է համարվում: Ցավոք սրտի, երեքի վերաբերյալ կա տեսագրություն, թե ինչպես են սպանում, բայց մարմինները չկան:

Արցախից 7 զինծառայողի մասունքներ ԴՆԹ հետազոտությամբ նույնականացվել են, բայց հարազատները չէին ընդունում: Նրանցից երկու անհետ կորածների տվյալներ, որոնց դեպքում կար ԴՆԹ նույնականացում, եւ ծնողները օբյեկտիվ պատճառներով հրաժարվում էին ճանաչել ՀՀ-ում կատարված փորձաքննության արդյունքները, մեր միջամտությամբ ու պետական աջակցությամբ փորձաքննություն են անցնել արտասահմանում՝ պայմանով, որ այդ երկրում հաստատվելուց հետո կընդունեն եւ կհուղարկավորեն: Հաստատվելուց հետո նրանց մարմինները հուղարկավորվել են: Պատերազմի երկու տարին է լրանում, եւ դեռեւս մոտ 100 մարմինների մասունքներ կան ՀՀ-ում, որոնք նույնականացված են, բայց հարազատները չեն ընդունում:

Որոշ դեպքերում անուղղակի փաստեր կան, որ ողջ են անհետ կորած համարվողները, ուղղակի ադրբեջանական կողմը չի խոստովանում: Ի սկզբանե ինչքան խոստովանել է, դրանից հետո ոչ մի անուն չի ավելացրել:

Տեսագրություն կա, որտեղ գերեվարված քաղաքացիական անձը նստած ծխում է, թուրքի հետ զրուցում: Այնուհետեւ վերադարձած քաղաքացիական գերիներից մեկը հաստատել է, որ այդ անձի հետ մեկ օր բանտախցում միասին է անցկացրել: Բայց տվյալ անձի մասին որեւէ տեղեկություն Ադրբեջանը չի հայտնում: Եթե մարդն այնտեղ սպանվել կամ մահացել է, ավելի հեշտ է ասել, որ չկա. չկա մարմին, չկա խնդիր: Սա հասարակական կազմակերպության լուծելիք խնդիր չէ, մենք սրա մասին խոսում, բարձրաձայնում ենք, բայց մեր հարթակում: Միջազգային հարթակում Կարմիր խաչի միջոցով ենք սրա մասին խոսում, բայց Կարմիր խաչը եւս լիարժեք մանդատ չունի, բարի կամքի վրա է հենվում:

Գերիների հարցը քաղաքականացված է, մինչ օրս բոլոր գերիները չեն վերադարձվել: Նրանց փոքր խմբերով վերադարձնելով՝ պարբերաբար օգտագործում են քաղաքական դիվիդենտներ շահելու համար:

Ի՞նչն է ուժ տալիս

Մեզ ուժ է տալիս մեր համախմբվածությունը: Մինչ այս կարգավիճակում հայտնվելը մենք այլ կյանքով էինք ապրում, այլ հայացքներով, բայց ամեն ինչ տակնուվրա է եղել, փոխվել: Այստեղ հավաքվելը, զրուցելը, համատեղ աշխատանքը մեզ շեղում է ծանր ցավից, ինչ-որ տեղ սփոփվում ենք: Որեւէ ընտանիքի նեցուկ կանգնելով, աջակցելով՝ դրանից եւս հանգստություն ենք ապրում: Սա է մեզ ուժ, էներգիա տալիս: Փորձում ենք պատվով կատարել այս գործը, իհարկե, կլինեն բացթողումներ, դժգոհություններ, բայց սխալներ չի գործում միայն ոչինչ չանողը»:

Զրուցեց՝ Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ

Հայաստան եւ Ադրբեջան

Մաս 3

Ազգային-ազատագրական պայքարի գործիչ, 1-ին Հանրապետության Ռազմական եւ Ներքին գործերի նախարար, ՀՅԴ Բյուրոյի երկարամյա անդամ Ռուբեն Տեր-Մինասյանի հոդվածը «Հայաստան եւ Ադրբեջան» վերնագրով, որը հրատարակվել է «Հայրենիք» ամսագրում 1927 թվականին եւ այժմեական է նաեւ մեր օրերում:

Նախորդիվ ըսուածներէն պէտք է եզրակացնել, որ մեր հիւսիսի կողմը ստեղծած է ժողովրդական զանգուած մը, որ իր քաղաքական օրիենտացիայով բոլորովին տարբեր է Աղուանից եւ Ուտեաց ուղղութենէն, եւ այս նոր օրիենտացիան հիմնապէս դէմ է հայերու շահերուն եւ նոյնիսկ գոյութեան:

Այս նոր ուղղութիւնը կը ձգտի հայոց եւ Հայաստանի դիակին վրայով միանալ թուրքին, կամ առնուազն ստրկացնել եւ ճնշել հայ ժողովուրդը:

Ահա այս ուղղութիւնն է մեր հիւսիսի հարեւանի, որ մահու եւ կենաց յարատեւ պայքարի պատճառ դարձած է:

Տարբեր օրիենտացիան միակ պատճառը չէ այս կենսական պայքարին. կան նաեւ տնտեսական, հողային եւ ազգային հարցեր: Ասոնք պարզելու համար պէտք է տեսնենք, թէ ի՞նչ կը ներկայացնէ Ադրբեջանը՝ իր ազգագրական նկարագրով եւ իր տնտեսական կառուցուածքով:

Ադրբեջանն իբր երկիր տնտեսական մէկ միաւոր չէ, այլ երկու տարբեր տնտեսական միաւորներէ է բաղկացած: Պատահականութիւն պէտք է համարել, որ այսօրուան Ադրբեջանի մէջ առաջները երկու ժողովուրդներ, երկու պետութիւններ եղած են. այս երեւոյթը ունեցեր է իր տնտեսական պատճառները:

Արդէն նշվեր է, որ Ադրբեջանը կը գտնուի մեծ եւ փոքր Կովկասներու միջեւ եւ կը բաժնի Կուր գետով երկու մասին. Կուրի աջ եւ ձախ ափերու շրջաններ Ադրբեջանը բաժնած է հետեւեալ գաւառներու. ձախ ափը՝ 1) Աղտաշ, 2) Բագու, 3) Գէօկչայ, 4) Զաքաթալա, 5) Նուխի, 6) Շամախի գաւառները, բացի ասոնցմէ 7) Ղուբայ գաւառը, որ գտնուելով մեծ Կովկասի հիւսիսը, աշխարհագրականօրէն մաս կը կազմէ Տաղստանի: 8) Սալեան, եւ 9) Լէնքօրան գաւառները, որոնք, գտնուելով Արաքսէն հարաւ եւ Կասպից ծովու ափին, տնտեսականօրէն ու ազգագրականօրէն Պարսկաստանի շարունակութիւնն են:

Այս 9 գաւառներու հետ Հայաստան տնտեսապէս քիչ առնչութիւն ունի, որովհետեւ այդ 9 գաւառներէն 7-ը իրենց ջուրերով եւ ոռոգումներով կապուած են միայն մեծ Կովկասի հետ, իսկ Սալեան եւ Լէնքօրան՝ Կասպից ծովու եւ Թալինի լեռներու հետ:

Այս շրջաններու արգաւանդ դաշտերը կապուած են մեծ Կովկասի ժայռոտ լեռներու հետ, եւ այդ աղքատ լեռներու բնակիչներն են շահագրգռուած իրենց ոտքի տակ եղած դաշտերով, եւ այդ դաշտաբնակներն ալ շահագրգռուած են մեծ Կովկասի արօտատեղիներով:

Ադրբեջանի ընդհանուր տարածութիւնն է 74.900 քառ. քիլօմէթր, վերստի հաշուով 69.500 քառ. վերստ, ասկէ 44.000 քառ. վերստը կը կազմեն վերոյիշեալ 9 գաւառները: Այս ընդարձակ հարթավայրը, որ ամփոփուած է Կուրի, Կասպից ծովու եւ մեծ Կովկասի միջեւ, կլիմայական միատեսակ պայմաններ ունի, միատեսակ ճոխ բնութիւն՝ շնորհիւ մեծ Կովկասէն բղխող ջուրերուն: Հոդ կը գտնուին նաւթի հանքային շերտերը, բամբակի, բրինձի դաշտերը, եւ կովկասեան լեռներու զովաստաններն ու ռազմական բանալիները:

Ըստ էութեան՝ այս շրջանը շաղկապուած է իր տնտեսութեամբ, երկրագործութեամբ, ջրով եւ մանաւանդ պաշտպանութեան յենարաններով մեծ Կովկասին, ասոր հիւսիս գտնուող Դաղստանին եւ Կասպից ծովուն հետ: Իսկ Հայաստանի հետ շաղկապուած է այն չափով, ինչքան իրարու հարեւան ամէն մէկ երկիր քաղաքականապէս:

Այս աշխարհագրական հանգամանքը մեծապէս ազդած է ժողովրդի էթնօգրաֆիկ կազմութեան եւ անոր դասաւորման վրայ: Այս շրջաններու մէջ կը գտնուին Ադրբեջանի հանքերն ու հարուստ հողերը, եւ այս պատճառով ալ հոդ է կենդրոնացած ժողովրդեան երեք չորրորդը: Ըստ 1917-ի մարդահամարին՝ Ադրբեջանի 2.208.590 ազաբնակութենէն 1.663.139 կը գտնուին այդ 44.000 քառ. վերստի 9 գաւառներու մէջ:

Ուրեմն՝ Ադրբեջանի էութիւնը կը գտնուի թէ՛ ազգաբանկութեան, թէ՛ արդիւնաբերութեան եւ թէ՛ հարստութեան տեսակէտէ, Կուրի ձախ ափին: Միւս կողմէ՝ այս 9 գաւառներու մէջ գտնուելով նաւթային շերտերը, բամբակի դաշտերը եւ մեծ Կովկասի բանալիները, Ռուսաստանի ուշադրութիւնը ատոնց վրայ է կեդրոնացած: Անդրկովկասի մէջ չկայ աւելի թանկարժէք անկիւն Ռուսաստանի համար քան այս անկիւնը: Եւ Ռուսաստան իր գաղթականութեամբ ամենէն ուժեղն է Ադրբեջանի այս մասերուն մէջ: Իսկ Դաղստանի հողագուրկ լեռնականները, իրենց լեռներու ջուրերուն ընթացքով, յամրաքայլ կ'իջնեն դէպի Կուր՝ հող եւ հարստութիւն ձեռք բերելու համար: Ասոր իբր հետեւանք՝ Կովկասի ստորոտները Զաքաթալայէն մինչեւ Բաքու ազգաբնակութեան կերպարանքը ոչ թէ թաթարական է, այլ աւելի շատ Դարղէնցի, Կիւրինցի, Ինէլօյցի, Ուտիցի, Աւառներ, Ջէկէր, Կռէզներ, Գաբիդուլներ, Թաթ լեռնականներ:

Այս բազմաթիւ ցեղերն ու ազգերը ոչ մէկ առնչութիւն, ցեղակցութիւն կամ լեզուակցութիւն ունին թուրքերու հետ. բայց բաժան-բաժան եւ իսլամ ըլլալով՝ թաթարական մեծամասնութիւնը ատոնց կը թելադրէ իր կամքը եւ այդ երկրամասին տուած է թաթար-թուրք բնոյթ, թէեւ ինքը լոկ համեմատական մեծամասնութիւն է:

Այս պատկերէն կը տեսնուի, թէ Հայաստանի եւ Ադրբեջանի այս մասին հետ տնտեսական բախման հիմնական պատճառներ չկան: Հայութիւնը, ըլլալով փոքր Կովկասի ժողովուրդ եւ ոչ թէ մեծ Կովկասի, այդ շրջանը կրնայ տնտեսական եւ ազգագրական տեսակէտէ կռուախնձոր ըլլալ միմիայն մեծ կովկասցիներու եւ ներկայ բնակիչներու միջեւ: Այս շրջաններուն մէջ չէ, որ հայութիւնը հող կ'որոնէ, ձմեռանոց կ'ուզէ, ոչ ալ այս շրջանի բնաիչներն են, որ իրենց տնտեսութեան համար պայման կը դնեն Հայաստանի ամառանոցներն ու արօտատեղիները:

Ադրբեջանի այս շրջանին համար աղքատ Հայաստանը տնտեսական արժէք չէ եւ ոչ ալ հրապուրիչ, ան նոյնիսկ չի ձգտիր իրեն բաղկացուցիչ Կուրի աջ ափին: Այս 9 գաւառները, ունենալով ինքնամփոփ եւ ինքնաբաւ տնտեսական վիճակ, բնաւ առիթը չունին բաղխուելու Հայաստանի հետ տնտեսական կամ հողային հարցերու գետնի վրայ, եւ փոխադարձաբար:

Այս շրջանի մէջ հաստատուած Առելի, Շամախի եւ Բագուի հայութիւնը, որ պատերազմէն առաջ 128.000 կը հաշուուէր, պիտի համարել իր երկրէն խլուած գաղութ մը միայն: Այս հայութիւնը, որ այսօր ալ շոշափելի քանակ կը կազմէ, պատճառ չպիտի դառնար մեր եւ Ադրբեջանի բարի դրացիական յարաբերութեանց խանգարման, եթէ չըլլային տնտեսական, հողային եւ ազգային այլ հակադիր պայմանները, որոնք գոյութիւն ունին Ադրբեջանի երկրորդ մասին՝ Կուրի աջ ափին գաւառներուն եւ Հայաստանի միջեւ:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ եղած պայքարներու հիմնական պատճառները պէտք է փնտռել Կուրի աջ ափին տնտեսական ու հողային շաղկապման մէջ Հայաստանի հետ եւ անոր ազգագրական կազմուածքի ու դասաւորման մէջ:

Այսօր Ադրբեջանի մէջ են մտցուցած Կուրի աջ ափը մինչեւ Արաքսի եզերքը՝ մօտ 25.000 քառ. վերստ տարածութիւն: Այս տարածութեան կէսը նախկին Սիւնիքի, Արցախի, Գարդմանի հայկական գաւառներն են, իսկ կէսն ալ նախկին Աղուանից աշխարհն է: Հին Աղուանից մասին մէջ, որ կը բռնէ ուղիղ Կուրի աջ ափի հարթավայրը, ինկած փոքր Կովկասի եւ Կուրի միջեւ, այսօր աղուանից փոխարեն կը գտնուին մեծամասնութեամբ ադրբեջանցի թաթարներ, կամ հին աղուանները? ձուլուած թաթարութեան մէջ:

Այս զանգուածը կը բռնէ մեծամասնութեամբ ներկայ Ղազախի, Աղդամի, Ջիբրայիլի գաւառները եւ Գանձակի գաւառի դաշտային 5 գաւառները: Այս գաւառները կը կազմեն նեղ ու երկար շերտ մը՝ դասաւորուած Կուրի ափերուն, որ իր արեւելեան ծայրով կը լայնանայ եւ կը բռնէ Արաքսի ու Կուրի միջին տարածութիւնը:

Այս հարթավայրի տարածութիւնը 12.500 քառ. վերստէն աւելի չէ եւ ունի մօտ 328.000 ազգաբնակութիւն: Այս ընդարձակ դաշտերէն կը բարձրանան փոքր Կովկասի կամ Ղարաբաղի լեռները: Այս լեռները, որ Հայաստանի ողնաշարը կը կազմեն եւ կ'իշխեն յիշեալ հարթավայրի վրայ, կտրած են հայկական բարձրաւանդակէն եւ միացուցած Ադրբեջանին: Լեռնային այս շրջանը բաժնած են 3 մասի՝ Գանձակի լեռնային մասը 4 գաւառակներով, ինքնավար Ղարաբաղ եւ ինքնավար Քիւրտստան:

Այս երեք շրջանները իրենց բնութեամբ բոլորովին տարբեր են մեր յիշած դաշտային չորս շրջաններէն: Մինչ լեռնային շրջանը անտառապատ է, դաշտայինը անտառազուրկ է. մինչ լեռնայինը զովասուն է, քարքարուտ ապառաժներէ կազմուած՝ պէտքական միայն խաշնարածութեան եւ աղքատ գիւղատնտեսութեան, դաշտայինը ունի տաք կլիմայ, բերիի դաշտեր՝ սեւահող շերտերով, արգաւանդ երկիր՝ ընդունակ հարուստ տնտեսութեան: Լեռնային շրջանը հարուստ է բազմապիսի հանքերով, իսկ դաշտայինը հանքազուրկ է: Վերջապէս ամէն ինչով այս երկու գօտիները տարբեր են իրարմէ:

Ինչպէս հին ժամանակները, այսօր ալ տարբեր են այս երկու շրջաններու ժողովուրդները՝ իրենց արհեստով, բնաւորութեամբ եւ ազգային ու լեզուական ծագումներով: Լեռնային մասերը, ինչպէս հին ժամանակները, հայկական են, պարունակելով իբր փոքրամասնութիւն քիւրդեր, իսկ դաշտային մասերը թաթարական են, պարունակելով իբր փոքրամասնութիւն հայեր եւ այլ նորեկ ցեղեր:

Այս հակադրութիւնը գոյութիւն ունենալով հանդերձ կարելի չէ ըսել, թէ լեռնային 3 շրջանները չեն շաղկապուած դաշտային 4 շրջաններու հետ. ընդհակառակը՝ այս տարբերութիւնները կարծես եկած են լրացնելու իրարու պակասը, ամբողջութիւն մը կազմելու համար:

Լեռնային շրջանները կ'իշխեն բացարձակօրէն դաշտային շրջաններու վրայ մինչեւ Կուրի եւ Արաքսի ափերը, բայց լեռնական հայեր, ինչպէս հին ատեն նոյնպէս այժմ, անկարող են իրենց ցեղով բնակելի դարձնել տաք կլիմայի տակ ինկած այդ հարթավայրը: Դաշտային մասը հարուստ է հողով եւ արգասաբեր, բայց ան իր բոլոր ջուրերը պիտի ստանայ աղքատ, բայց ջրառատ լեռներէն: Թէեւ լեռները հարուստ են հանքով ու անտառով, բայց չունին հաց ու բամպակ, բրինձ ու միրգ, զորս պիտի ստանան դաշտային մասէն: Թէեւ դաշտը հարուստ է ձմեռային արօտատեղիներով, բայց զուրկ է ամառային արօտատեղիներէ եւ, փոխադարձաբար, լեռն ալ զուրկ է ձմեռանոցներէ: Լեռը ցանքսի հող չունի, բայց կենդանաբուծութեան յարմար է. իսկ դաշտը հող ունի, բայց կենդանաբուծութեան յարմար չէ:

Այս պայմանները տնտեսական տեսակէտէ երկու տարբեր գօտիները իրարմէ կախեալ վիճակի մէջ դրած են, այնպէս որ մէկը առանց միւսին կը դառնայ կիսատ եւ անպաշտպան:

Այս դրութիւնը պարզելով՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստան եւ անոր ողնաշար լեռնային գաւառները՝ Ղարաբաղ եւն, տնտեսական սերտ առնչութիւն ունին Կուրի աջ ափի հարթավայրին հետ, եւ փոխադարձաբար իրարմէ կախեալ վիճակի մէջ են, որ Կուրի աջ ափի դաշտային մասը իսպառ տարբեր բնոյթ ունի, թէ՛ կլիմայով եւ թէ՛ տնտեսութեամբ, Լեռնահայաստանէն, եւ որ այդ երկու գօտիները, ինչպէս առաջները՝ այժմ ալ տարբեր ազգագրական կազմ ունին, առաջները դաշտերու մէջ աղուաններ, լեռները հայեր, իսկ այսօր դաշտերը թաթար, լեռները հայեր:

/Շարունակելի/

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

**Խմբագիր
Ա. Պուլուզյան**